ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գիտելիքների արագ զարգացման պայմաններում ուսուցման բովանդակությունը կրում է որոշակի փոփոխություններ: Սովորողներին անհրաժեշտ է տալ հիմնարար գիտելիքներ. այն, ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ:

Չնսեմացնելով տեսական հիմնարար գիտելիքների դերը՝ կրթության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման գործնական ուղղվածությանը: Ուշադրության են արժանանում այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք կիրառություն կգտնեն գործնական կյանքում: Ակտիվ ուսուցումը ոչ միայն ապահովում է ստացած գիտելիքների մնայունությունը և կենսական տարբեր իրադրություններում նրանց կիրառման տրամաբանությունը, այլև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա (շարժառիթ) ձևավորելու անհրաժեշտությունը:

Սույն ձեռնարկի նպատակն է ներկայացնել բառակազմական իրողությունների ուսուցումը ժամանակակից մեթոդներով, տեխնոլոգիաներով՝ որոշակի մշակվածությամբ, հաջորդական, տրամաբանական անցումներով ձևավորելով բառագիտական մակարդակի համակարգային գիտելիքներ:

Կարծում ենք՝ սույն ձեռնարկը լրացուցիչ մեթոդական օգնություն կարող է լինել ուսուցիչների, բուհական համակարգում մեթոդիկայի դասընթացը վարողների, ուսանողների համար:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔՈՒՄ

Լեզուն այն տաճարն է, ուր բնակվում է ազգի ոգին:
Վ. Հումբոլտ

Ուսումնառության սովորողակենտրոն մոտեցման մոդելը վաղուց արդեն հաստատել է իր առավելությունները դասավանդման ավանդական մոտեցման նկատմամբ:

Կառուցողական ուսուցման հայեցակարգը հուշում է, որ ուսումնական գործընթացն ու դասարանական աշխատանքն այնպես պետք է կազմակերպել, որ իրերի, երևույթների մասին սովորողները սեփական ենթադրություններն ու վարկածներն առաջադրեն: Այն ուսուցիչները, որոնք ձգտում են խթանել և խորացնել սովորողների ուսումնառությունը, հարկ է, որ կիրառեն համագործակցային տեխնոլոգիաներ, բացահայտեն և արժևորեն սովորողների տեսակետները: Ընդունելով աշակերտների կենտրոնական դերը՝ ուսուցիչները դասարանում նրանց համար իմաստալից փորձառություն և համակողմանի աշխատանք պետք է կազմակերպեն՝ խթանելով սովորողների եզրահանգումների և գաղափարների ծնունդը:

‹‹Վերլուծական բարդություններ›› թեմայի ուսուցումը փորձել ենք կառուցել սովորողակենտրոն (կամ աշակերտակենտրոն) ուսուցման հայեցակարգով՝ սովորողին վերապահելով հիմնական դերը. աշակերտը պետք է կարողանա հայտնաբերել, սովորել՝ համեմատելով երեկվա և այսօրվա արդյունքները, իր և համագործակիցների մտքերն ու կարծիքները: Կարևորել ենք այն հանգամանքը, որ սովորողներին պետք է ավելի շատ ուղղորդեն նպատակային ուսումնական նյութերը, քան ուսուցիչները:

Նպատակահարմար է վերլուծական բարդությունների ուսուցման գործընթացը կազմակերպել ‹‹Շրջագայություն պատկերասրահում›› մեթոդով:

Ուսումնական նյութը բաժանում ենք չորս մասի՝ սովորողների յուրաքանչյուր խմբին տալով ուսումնասիրելու վերլուծական բարդության մի տեսակը: Աշխատանքի ընթացքում բոլոր խմբերն օգտվում են դասագրքի՝ իրենց հանձնարարված նյութի համապատասխան բաժնից՝ համակարգելով, խմբավորելով վերլուծական բարդության տեսակներն աղյուսակներում, գծագրական դասակարգիչներում և այլն. այսպիսով, պատկերասրահի համար կազմվում է նյութի հետաքրքիր և ուսուցողական հավաքածու:

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը խմբերին տրամադրում է հավելյալ նյութեր, ծանոթություններ, բառարան-տեղեկատուներ և այլն:

<u>Խումբ 1-ին.</u> անվանական հարադրություններ

Առաջադրանք 1-ին.

Բացել դասագրքի (Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Հայոց լեզու 10) հումանիտար հոսք) 138-րդ էջը և ‹‹Անվանական հարադրություններ›› ենթաբաժինը կարդալով՝ աղյուսակով ներկայացնել այդ հարադրություններն ըստ խոսքիմասային պատկանելության և ըստ բաղադրիչների կապակցման միջոցների:

<u>Ծանոթություն:</u>

Անվանական հարադրությունների աղյուսակում ճիշտ է ներառել նաև մակբայական և շաղկապական հարադրությունները՝ առաջնորդվելով Ա.Սուքիասյանի կատարած ստորաբաժանմամբ (տե՛ս Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու,Ե.,1982, էջ 294):

Նմուշօրինակ՝

	Գոյական	**Ածական**	**Թվական**	**Դերանուն**	**Մակբայ**	**Շաղկապ**
Շաղկապ-ներով	*հայր ու մայր*	*լավ ու վատ*	*հազար ու մի*	*այս ու այն*	*վեր ու վար*	----------
Միության գծիկով	*ձյուն-ձմեռ*	*լավ-վատ*	*յոթ-ութ*	*ինչ-որ*	*հրով-սրով*	----------
Առանց միության գծիկի	*Մայր աթոռ*		*մեկ երրորդ*	*ոչ մի*	*տնից տուն*	*ասես թե*

Առաջադրանք 2-րդ.

Տրված անվանական հարադրությունները դասակարգե՛ք ըստ բաղադրիչ-ների միջև եղած իմաստային հարաբերությունների.

անթիվ-անհամար, մեծ ու փոքր, անուն-ազգանուն, տուն ու տեղ, հայր-մայր, ամառ-ձմեռ, սև-սպիտակ, նամակ-դիմում, նետ-աղեղ, գիշեր-ցերեկ, ծիլ-ծաղիկ, անթիվ-անհամար, հաստ ու բարակ, ահել-ջահել, քիթ-մռութ, արյուն-քրտինք, վեր ու վար, ահ ու սարսափ, բեռով-բարձով, բուք ու բորան, խանութ-սրահ, երկինք-գետին, ակադեմիկոս-քարտուղար, դեղ-դարման:

Նմուշօրինակ՝

Հոմանիշություն ցույց տվող	***Հականիշություն ցույց տվող***	***Առնչակից իմաստներ ունեցող***

Առաջադրանք 3-րդ.

Սահմանե՛ք անվանական հարադրությունները նկարագրական եղանակով:

<u>Խումբ 2-րդ.</u> բայական հարադրություններ

Առաջադրանք 1-ին.

Դասագրքի համապատասխան էջում (139) կարդացե՛ք հարադրավոր բայերին վերաբերող հատվածը. Մ-աձև աղյուսակի համապատասխան սյունակներում գրե՛ք տրված պարզ բայերով կազմված չորսական հարադրավոր բայ և դրանց համարժեք բառերը.

գալ, գնալ, տալ, առնել, անել, դնել:

Աղյուսակը կարելի է շարունակել բայական հարադրություններ կազմող այլ բառերով:

Նմուշօրինակ՝

Պարզ բայ	***Բայական հարադրություն***	***Համարժեք բառ***
գալ	մոտ գալ պտույտ գալ առաջ գալ պար գալ	մոտենալ պտտվել առաջանալ պարել
գնալ		
տալ		
դնել		

Առաջադրանք 2-րդ

Դասագրքում ծանոթացե՛ք զուգադրական բայերը ներկայացնող նյութին և գունավոր նշագրիչներով խմբավորե՛ք տրված բայերն ըստ բաղադրիչների միջև եղած իմաստային հարաբերությունների (հոմանիշ, հականիշ, առնչակից գործողություններ ցույց տվող).

ուտել-խմել	աղաչել-պաղատել
տանել-բերել	վազել-գալ
գնալ հասնել	տանել պահել
անցնել ընկնել	ելնել- մտնել

ասել-խոսել	եփել-թափել
բացել-փակել	գնալ մոտենալ
դնել-վերցնել	կարել-կարկատ¬ել
անցնել-գնալ	ծլել-ծաղկե
երգել-պարել	թողնել-գալ
ելնել կանգնել	գտնել բերել
կտրել-կապել	գալ հասնել

Առաջադրանք 3-րդ.

Սահմանե՛ք բայական հարադրությունները նկարագրական եղանակով:

***<u>Խումբ 3-րդ</u>*. կրկնավոր բարդություններ**

Դասագրքի 136-րդ էջում կարդացե՛ք ‹‹Կրկնություն›› բաժնի ‹‹Հարադրական կրկնավորներ›› հատվածը:

Առաջադրանք 1-ին.

Մ-աձև աղյուսակի համապատասխան սյունակներում լրացրե՛ք հարադրական կրկնավորներն ըստ բաղադրիչների կապակցման միջոցների՝ օգտվելով Դ.Գյուրջինյանի ‹‹Հայերեն բառարան – տեղեկատու›› գրքույկից.

Շաղկապներով	Նախդիրներով	Միության գծիկով
շատ ու շատ	ժամանակ առ ժամանակ	կաս-կարմիր

Առաջադրանք 2-րդ.

Տրված կրկնավորները դասդասե՛ք ըստ աղյուսակի համապատասխան ի-մաստային բաժանումների և ցո՛ւյց տվեք բաղադրիչների կրած փոփոխությունները.

սուր-սուր, աման-չաման, տեղ-տեղ, դեզ-դեզ, տուն առ տուն, մարդ-մուրդ, ջահել-ջիվան, տող առ տող, մեծ-մեծ, խակ-խակ, մեկ-մեկ, գունդ-գունդ,

հաց-մաց, տեսակ-տեսակ, հազար-հազար, դեփ-դեղին, գույն-գույն, խումբ-խումբ, գունդ առ գունդ, ժամանակ առ ժամանակ, կաս-կարմիր, դափ-դատարկ, գրիչ-մրիչ:

Նմուշօրինակ՝

բազմակի-ություն	***բաշխակա-նություն***	***անորո-շություն***	***սաստկա-կանութ-յուն***	***հավաքա-կանություն***	***հաջորդա-կանություն***
դեզ-դեզ	*երեք-երեք*	*տեղ-տեղ*	*սուր-սուր*	*ման-չման*	*տուն առ տուն*

Առաջադրանք 3-րդ

Սահմանե՛ք կրկնավոր հարադրությունները նկարագրական եղանակով:

***<u>Խումբ 4-րդ</u>*. հատվածական բարդություններ**

Այս խմբի համար ուսուցիչն ինքն է տրամադրում նյութի հավաքածուն, քանի որ դպրոցական դասագրքում հատվածական բարդությունները չեն առանձնացվում որպես բարդության առանձին տեսակ: ‹‹Վերլուծական բարդությունների առանձին տեսակ է հատվածական բարդությունը, որի բաղադրիչները նույնական կամ նույնիմաստ ածականակերտ ածանց-ներով կազմված բառեր են››: Հատվածական բարդություններ են կազմում *-ական, -այի՛ն, -երեն* ածականակերտ ածանցները: Բարդության բաղա-դրիչները գրվում են միության գծիկով, օրինակ՝ *ռազմական-քաղաքական, գրական-գեղարվեստական, դատական-բժշկական, ռազմական-ծովային, ռուսերեն-հայերեն, անգլերեն-ֆրանսերեն* և այլն: Նման բարդությունների առաջին բաղադրիչի ածանցը կարող է կրճատվել. այս դեպքում բարդու-թյունը դառնում է համադրական, այսինքն՝ բաղադրիչ բառերը սկսում են գրվել միասին: Համադրական բարդության այս տեսակը ևս կոչվում է հատվածական, այսպես՝ *ռազմաքաղաքական, դատաբժշկական, ռազմածո-վային*: Այդպես չէ, սակայն, այն վերլուծական բարդությունների դեպքում, որոնց երկու եզրերն էլ (բաղադրիչ բառերը) տարբեր լեզուներ կամ ազգեր մատնանշող բառեր են: Նման բարդությունների առաջին բաղադրիչի

ածանցն ընկնելիս բարդությունը չի դադարում վերլուծական լինելուց, և բաղադրիչները շարունակում են գրվել միության գծիկով, օրինակ՝ *ռուս-հայերեն, անգլո-ֆրանսիական:*

Առաջադրանք 1-ին.

Տրված վերլուծական հատվածականները հնարավորության դեպքում փոխարինե՛ք համադրականներով.

գիտական-տեղեկատվական, ազգային-եկեղեցական , հասարակական-քաղաքական, հայերեն-գերմաներեն, կրթական-մշակութային, ազգային-ազատագրական, ռուսերեն-ֆրանսերեն, ռազմական-քաղաքական, վարչական-տարածքային, կրոնական-դավանաբանական:

Առաջադրանք 2-րդ.

Սահմանե՛ք հատվածական հարաղրությունները նկարագրական եղանակով:

Նյութերն ուսումնասիրելուց և աշխատանքներն ամբողջացնելուց հետո խմբերն իրենց աշխատանքները փակցնում են դասարանի պատերին՝ ստեղծելով յուրօրինակ ուսումնական պատկերասրահ: Սովորողները շրջում են դասարանով՝ կանգնելով հաջորդաբար յուրաքանչյուր նմուշի առջև. խմբի ավագները ներկայացնում են իրենց աշխատանքները, քննարկում առաջադրանքները, դրանք կատարելու ընթացքը, առաջացած դժվարությունները, նշում են իրենց դիտարկումները, անում շտկումներ, առաջարկներ: Ամեն մի խումբ պատասխանում է իրեն ուղղված հարցերին և ամփոփում աշխատանքը: Դասարանին հանձնարարվում են ամրակայող, կիրառական վարժություններ, առաջադրանքներ:

Առաջադրանքներ և վարժություններ

1.*Վերլուծական բարդությունների կաղապարները փոխակերպե՛ք համադրականների՝ ավելացնելով համապատասխան վերջածանցներ:*

Մուսա լեռ, երեք հարյուր, մեջ բերել, վայր իջնել, հինգ հազար, հարավարևելք, առաջ անցնել, Լոս-Անջելես, ձեռք բերել, Հարավային Աֆրիկա, Մերձավոր Արևելք, չորս շաբաթ:

Նմուշօրինակ՝

Մուսա լեռ – մուսալեռցի

2.*Գտե՛ք վերլուծական բարդությունները, որոշե՛ք, թե ինչ խոսքիմասային պատկանելություն ունեն, դրանք փոխարինե՛ք պարզ կամ ածանցավոր բառերով:*

Լուսաբացին մի անգամ ձայն տալուց իսկույն վեր թռա և արագ-արագ հագնվեցի: Բակում պապս հագցնում էր ձիու սանձը: Քիչ հետո երկուսով նստեցինք ձին ու ճանապարհ ընկանք: Երբ հեռացանք գյուղից, ամեն ինչ ինձ համար նոր էր ու անծանոթ: Ես անընդհատ հարց էի տալիս, իսկ պապս դողդոջ ձայնով պատասխանում էր, երբեմն-երբեմն կանչում ձիու վրա ու սանձը ձգում, երբ ձիու ոտքը դեմ էր առնում քարին:

Նմուշօրինակ՝ ձայն տալ(բայ) –կանչել

3. *Տրված արմատներով կազմե՛ք և՛ համադրական, և՛ վերլուծական բարդություններ՝ դրանք դարձնելով թե՛ առաջին, թե՛ երկրորդ բաղադրիչ.*
այն, երկու, սար, օր, մայր, ծաղիկ, ծառ:

Նմուշօրինակ՝ այն - այնինչ, միայն, այս ուայն, այն էլ...

4. *T-աձև աղյուսակում խմբավորե՛ք միության գծիկով և առանց միության գծիկի գրվող հարադրությունները* (*անհրաժեշտության դեպքում դնել միության գծիկը*).

ոտքից գլուխ	ոտքով գլխով	գլուխ տալ	գլուխ գլխի
հինգ վեց	հինգից վեց	հինգ վեցերորդ	հինգ հարյուր
կաս կարմիր	կանաչ կարմիր	կարմիր կապույտ	դույզն ինչ
դեփ դեղին	դեղին կանաչ	դեմ դիմաց	դեմ առնել
տեր Հակոբ	Տեր Հակոբյան	տեր տիրական	տեր հայր
գալ գնալ	գնալ տեսնել	գալ հասնել	գնալ մնալ
թերթ թերթ	փոքր ինչ	քաղաք ամրոց	քաղաքից քաղաք
ինչ որ է	տնով տեղով	ինչ ինչ	երեք չորրորդ

Միության գծիկով գրվող	Առանց միության գծիկի գրվող

5. *Վերլուծական բարդությունների համար կազմե՛ք դիագրամների բուրգ՝ հետևելով ուղեցույցին:*

Ուղեցույց

Բուրգը կառուցում ենք՝ սկսելով հիմնաշերտից (1-ին շերտ), որտեղ առանձին բաժանումներում գրում ենք վերլուծական բարդությունների տեսակները ներկայացնող մասնավոր օրինակներ, ապա օրինակներից ելնելով՝ կառուցում ենք գլխագրերը, որոնք ներկայացնում են քերականական հասկացությունները (2-րդ շերտ). բուրգի 3-րդ շերտը տալիս է վերլուծական բարդությունների սահմանումը, իսկ 4-րդ՝ վերին շերտն ամբողջացնում է բուրգը՝ նշելով ուսուցանվող թեմայի վերնագիրը:

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔՈՒՄ

«Մարդու հոգեկանի զարգացման համընդհանուր և անհրաժեշտ ձևերը նրա ուսուցումն ու դաստիարակությունն են: Դրանք կարող են լինել տարերային և նպատակաուղղված, բայց միշտ դրանց շնորհիվ մարդը յուրացնում է նյութական և հոգևոր մշակույթի արժեքները» (Լ.Ս. Վիգոտսկի):[1]

Ըստ Վիգոտսկու՝ ցանկացած խելամտորեն կառուցած ուսուցում այս կամ այն աստիճանով օժանդակում է անձի մտածողության զարգացմանը: Ուսումնական գործունեության (գործողությունների) օգնությամբ սովորողները մոդելավորում և ուսումնասիրում են ելակետային հարաբերությունները, որոնց վրա հենված կողմնորոշումը մնացած բոլոր խնդիրների լուծման համընդհանուր հիմքն է: Այդ իսկ պատճառով «Տեսական գիտելիքների յուրացման ընթացքում զարգացման պայմաններ են առաջանում հենց այդ մտածական գործողությունների մեջ՝ որպես տեսական մտածողության կարևորագույն բաղադրիչների»:[2]

Ուսումնական գործունեության կրողը նրա (այդ գործողության) անձն է (սուբյեկտը): Այդ դեպքում դպրոցականն ուրիշների հետ և ուսուցչի օգնությամբ իրագործում է սեփական ուսումնական գործունեությունը: Անձի զարգացումը տեղի է ունենում հենց իր կայացման գործընթացում (տարրական դասարաններից սկսած), երբ դպրոցականն աստիճանաբար վերածվում է սովորողի, որը փոխում և կատարելագործում է ինքն իրեն:

Ուսումնական ցանկացած խնդիր լուծվում է գործողությունների համակարգի միջոցով՝ հաղորդակցման և համագործակցության շնորհիվ:

---

[1] Մանրամասն տե՛ս «Մանկավարժություն», Ե., 2007, հմ. 5-6, էջ 23:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 22:

Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար գտնվում են ուսումնական գործունեության նոր ձևեր, մեթոդներ, որոնք զարգացնում են սովորողների լեզվամտածողությունը, խոսքային կարողությունը, ձևավորում են իմացական կայուն կառույցներ (մեր պարագայում՝ լեզվական), որոնք ժամանակի ընթացքում դառնում են ինքնակառավարվող:

Հանրակրթական դպրոցի «Հայոց լեզու, գրականություն» ուսումնական բնագավառի առարկայական ծրագիրը ներկայացվում է աղյուսակի տեսքով, որի երեք սյունակները համապատասխանաբար արտացոլում են ուսուցանվող նյութը, ուսուցման նպատակը և ուսումնական գործունեության տեսակները: Այս կառուցվածքն ընտրված է որպես լրացուցիչ մեթոդական օգնություն ուսուցիչներին:[3]

Ուսուցանվող նյութ	**Ուսուցման նպատակ**	**Ուսումնական գործունեություն**

Ստեղծված ծրագրերն ընդհանուր ուղեցույց են ուսուցչի համար, բայց և յուրաքանչյուր դաս ուսուցչի ստեղծագործական աշխատանքի, անհատական որոնման արդյունք է:

Փորձենք ինքնուրույն համակարգել, սահմանել և հաջորդաբար ներկայացնել թեմայի ուսուցումը համագործակցային եղանակով՝ կիրառելով *մտագրոհ (հենակետային հարցեր), տրամագրային (դիագրամային) բուրգ, խմբային հետազոտություն, վարժություններ,խմբավորում,Т-աձև աղյուսակ, ՓԳՀ մեթոդները:*

[3] Մանրամասն տե՛ս «Հայոց լեզու, գրականություն». հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Ե., 2006, էջ 112-113:

1) Խթանման փուլ

Այս փուլում կիրառում ենք հենակետային հարցեր աշակերտների բառակազմական գիտելիքները ստուգելու նպատակով.

ա/ ի՞նչ միջոցներով (բաղադրիչներով) ենք նոր բառեր կազմում,

բ/ բառակազմական ի՞նչ եղանակներ կան,

գ/բառակազմական ո՞ր եղանակն է բառաստեղծման առավել լայն հնարավորություն տալիս՝ ածանցո՞ւմը թե՞ բառաբարդումը,

դ/ ի՞նչ է բարդությունը. փորձե՛ք տալ դրա բանաձևը (կաղապարը),

ե/ որո՞նք են բարդ բառերի և բառակապակցությունների, բարդ բառերի և դարձվածքների տարբերությունները, բերե՛ք օրինակներ, ինչպես՝

<u>գրասենյակ</u> - գրագրության սենյակ
<u>ինքնավստահ</u> – գլխարկը թեք դրած
<u>գլուխգործոց</u> - գործերի գլուխը (գլխավորը)
<u>հեղինակագրկվել</u>-դեմքը կորցնել

2) Իմաստի ընկալման փուլ

Փորձում ենք աշակերտների օգնությամբ և ուսուցչի ուղղորդմամբ գրատախտակին կառուցել համադրական բարդությունների տեսակները ներկայացնող *տրամագրային բուրգ,* որը բոլոր խմբերի համար կդառնա հետազոտության պարտադիր զննական նյութ: Բուրգը կառուցում ենք՝ սկսելով հիմնաշերտից (1-ին շերտ), որտեղ առանձին բաժանումներում գրում ենք համադրական բարդությունների տեսակները ներկայացնող մասնավոր օրինակներ, ապա օրինակներից ելնելով՝ կառուցում ենք գլխագրերը, որոնք ներկայացնում են բառակազմական հասկացություններ (2-րդ շերտ). բուրգի 3-րդ շերտում տալիս ենք համադրական բարդությունների սահմանումը, իսկ 4-րդ շերտն ամբողջացնում է բուրգը՝ նշելով ուսուցանվող թեմայի վերնագիրը:

Տրամագրային բուրգը կունենա հետևյալ պատկերը.[4]



Տրամագրային բուրգը կազմելուց հետո անցնում ենք խմբային հետազոտության. աշակերտներին բաժանում ենք չորս խմբի՝ յուրաքանչյուրին տալով համադրական բարդության մեկ տեսակին վերաբերող նյութի նախնական հավաքածու, առաջադրանքներ և վարժություններ: Ուսուցիչը հանձնարարում է նաև կարդալ դասագրքի համապատասխան ենթաբաժինը:

Նյութի յուրաքանչյուր հավաքածու կազմվում է որոշակի համամասնությամբ՝ համեմատության հնարի կիրառմամբ:

<u>Խումբ 1-ին</u>. նյութի նախնական հավաքածու

Իսկական (*ձուլական*), *են այն բարդ բառերը, որոնց բաղադրիչները սերտորեն ձուլված են միմյանց:* Սրանք ոչ թե բառը կազմող մասերի մեխանիկական միացման, այլ բաղադրիչների իմաստների ձուլման արդյունք են:

Իսկական բարդության առանձնահատկություններն են.

1. ունի բառային ընդհանուր շեշտ,

[4] «Ձուլական» տերմինը գործածել ենք «իսկական» եզրույթի փոխարեն՝ առաջնորդվելով Դ. Գյուրջինյանի, Ն. Հեքեքյանի « Հայոց լեզու 10» հումանիտար հոսքի համար նախատեսված դասագրքով, էջ 141:

2. բաղադրիչներն առավել հաճախ միանում են հոդակապով կամ առանց հոդակապի,

3. բաղադրիչներն իմաստային անկախություն չունեն, այլ միմյանց ձուլվելով՝ առաջ են բերում նոր իմաստ

4. բաղադրիչները ձևային անկախություն չունեն,

5. կարելի է փոխակերպել բառակապակցության. այս դեպքում նրա բաղադրիչները ենթարկվում են քերականական փոփոխության, օրինակ՝ *քարտաշ – քար տաշող, ծնկոսկր – ծնկի ոսկոր,*

6. բաղադրիչների կապը ստորադասական է, այսինքն՝ մեկը լրացնում է մյուսին (հիմնականում՝ առաջինը երկրորդին), ինչպես՝

արմատ	**արմատ**
լրացում	*լրացյալ*

ջրկիր – ջուր կրող, ճաշասենյակ - ճաշի սենյակ, խոտհունձ – խոտի հունձ, դիմափոշի - դեմքի փոշի:

Մտապահի՛ր:

Հայերենում հոդակապը հիմնականում ***ա*** ձայնավորն է, օրինակ՝ *սրբատաշ, մարդասեր, օրինապահ* և այլն: Մի քանի համադրական բարդություններում հոդակապի դեր է կատարում ***ե*** ձայնավորը (*ծաղկեփունջ, հաշվեգետ, բաժնետեր* և այլն): ***Ա*** հոդակապը իրեն նախորդող ***ի*** ձայնավորի հետ միասին մեծ մասամբ հնչյունափոխվում և դառնում է ***ե,*** օրինակ՝*ոսկեծամ–ոսկի+ա+ծամ, կարեվեր–կարի+ա+վեր(ք), բարեսիրտ - բարի+ա+սիրտ:* Այդ հնչյունափոխությունը տեղի չի ունենում *ձի, մի, լի, թի, դի* արմատների դեպքում՝ *ձիաձետ, միանշանակ, լիաբուռն, դիակառք, թիանավակ:* Մի շարք համադրական կրկնավորների առաջին բաղադրիչը քերականական հնացած ձև է՝***ե*** մասնիկով (*գյուղեգյուղ, սերնդեսերունդ, ամսեամիս)*, որը չպետք է շփոթել հոդակապի հետ:

Վարժություն 1.

Տրված իսկական բարդությունները փոխարինե՛ք բառակապակցություններով և ներկայացրե՛ք դրանց ձևաբանական կաղապարները.

եսապաշտ, ինքնաստեղծ, ահակոտոր, շուտափույթ, տարեվերջ, ագեվազ, ականազերծ, փոշեթաթավ, եռահոս, ոսկեզօծ, ամենահաղթ:

Նմուշօրինակ՝

ես(ա)	պաշտ
դերանուն	դերբայ

Վարժություն 2.

Առանձնացրե՛ք իսկական բարդությունների արմատները, նշե՛ք բաղադրիչների կապակցման միջոցները և բացատրե՛ք բառերի իմաստները:

այգեբաց	այգաբաց
օրավուր	օրավար
հրաձիգ	հրձիգ
արջառոս	արջոռս
միաժամանակ	միառժամանակ
պատրաստական	պատրաստական
ականակիր	ականակիտ

Նմուշօրինակ՝

այգեբաց -այգի+ա+բաց - այգու բացելը այգաբաց-այգ+ա+բաց – լուսաբաց

<u>Խումբ 2-րդ</u>. նյութի նախնական հավաքածու

Կցական են այն բարդությունները, որոնք կազմվում են բառակապակցության բաղադրիչների կցումով:

Կցական բարդության առանձնահատկություններն են.

1. ունի բառային ընդհանուր շեշտ,

2. բաղադրիչները միանում են գրաբարյան նախդիրներով, շաղկապներով կամ առանց դրանց,

3. բաղադրիչներն ունեն իմաստային անկախություն,

4. բաղադրիչներն ունեն ձևային անկախություն,

5. կարելի է փոխակերպել բառակապակցության. այս դեպքում նրա բաղադրիչները հիմնականում քերականական փոփոխության չեն ենթարկվում, օրինակ՝ այսպես -այս պես, առևտուր - առ և տուր, սարնիվեր – սարն ի վեր,

6. բաղադրիչների կապը կարող է լինել կա՛մ համադասական (այսինքն՝ բարդությունը կազմող բառերն իրար համազոր են), կա՛մ ստորադասական (այսինքն՝ բառակապակցության փոխակերպելիս սրանք ներկայանում են լրացում–լրացյալ հարաբերությամբ), ինչպես՝ ելևէջ - ել և էջ, մեջտեղ - մեջ տեղ, քեռորդի – քեռու որդին, տանտիկին – տան տիկինը:

Վարժություն 1.

Տրված կցական բարդությունները խմբավորե՛ք ըստ բաղադրիչների կապակցման միջոցների՝ կիրառելով «խմբավորում» մեթոդական հնարը.

կեսօր հորեղբայր ումևէ քսաներկու
այսինչ սարնիվեր
երթևեկ երբևէ խոչընդոտ որպես

այրուկին իմիջիայլոց կանգառ տանտիկին
տղամարդ օրընդմեջ մեկտեղ
այրուձի քեռայր
տերողորմյա վաթսունինը այդտեղ

Ծանոթություն.

«Խմբավորում» մեթոդական հնարը պահանջում է տրվող բարդության տեսակները խմբավորել գունավոր նշագրիչներով, օրինակ՝ կապակցման նույն միջոցների դեպքում՝

<u>կարմիրով</u>՝ նախդրավոր բարդությունները,

<u>կանաչով</u>՝ շաղկապավոր բարդությունները,

<u>կապույտով</u>՝ անշաղկապ բարդությունները:

Վարժություն 2.

T-աձև աղյուսակում առանձնացրե՛ք իսկական և կցական բարդությունները՝ նշելով նրանց բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները և կապակցման միջոցները.

խաղընկեր, շիլափլավ, ծովառյուծ, հորեղբայր, կեսօր, պարեղանակ, խոտհունձ, արուէգ, եռուզեռ, ժամանց, հողամաս, առուծախ, այրուկին, դարուփոս, ճաշասենյակ, ջրափոս, լացուկոծ, երթևեկ, առևտուր, գրասեղան, ականջօղ, դիմափոշի, ազգատոհմ, ելևէջ, որբևայրի:

Նմուշօրինակ.

Իսկական	**Կցական**
Խաղընկեր – խաղի ընկեր (ստորադասական կապ, անհոդակապ)	*շիլափլավ* – շիլա փլավ (ստորադասական կապ, անհոդակապ)

<u>Խումբ 3-րդ.</u> նյութի նախնական հավաքածու

Կրկնավոր են այն բարդությունները, որոնք կազմվում են արմատի կրկնությամբ:

Կրկնավոր բարդության առանձնահատկություններն են.

1. ունեն բառային ընդհանուր շեշտ,

2. բաղադրիչները միանում են հոդակապով, շաղկապներով և գրաբարյան նախդիրներով կամ առանց դրանց,

3. արմատը կարող է կրկնվել հնչյունափոխված կամ անհնչյունափոխ ձևով,

4. հաճախ կարող է ունենալ իր վերլուծական (առանձին գրվող) տարբերակը, օրինակ՝ *լիուլի – լի-լի, մոտեմոտ – մոտ-մոտ, այլևայլ - այլ-այլ:*

Վարժություն 1.

Խմբավորե՛ք կրկնավոր բարդությունները՝ տարբերակելով դրանք՝

***ա)** ըստ հնչյունափոխության առկայության կամ բացակայության,*

***բ)** ըստ կապակցման միջոցների.*

վազվզել, լիուլի, բարբառ, մեծամեծ, գույնզգույն, մերթընդմերթ, թրթիռ, ծործոր, տեղնուտեղը, կաղնիկաղ, փոխեփոխ, մեջընդմեջ, ժամառժամ, ինքնըստինքյան, չարչարել, ծածանել, տեղնուտեղը, չարաչար, ծործոր, կորիկոր, ծակուծուկ, գույնզգույն, փողփողալ, վազվզել, քրքրել, հետզհետե, հացումաց, նորանոր, մոտեմոտ, կափկափել, տակետակ, ջրջրել, կցմցել, թափթփել:

Նմուշօրինակ՝

Հնչյունափոխված բաղադրիչներով	Անհնչյունափոխ բաղադրիչներով
վազվզել	լիուլի

Հոդակապով	Անհոդակապ	Ճաղկապով	Նախդիրով
մեծամեծ	բարբառ	լիուլի	մերթընդմերթ

3) Կշռադատման փուլ

Նյութի նախնական հավաքածուն ավարտելուց հետո յուրաքանչյուր խմբի կողմից ընտրված խոսնակը դասարանին է ներկայացնում խմբի հետազոտական աշխատանքները, տալիս որոշակի սահմանումներ, կատարում գիտելիքների փոխանակում, որոնք պիտի վերաճեն կարողությունների, հմտությունների: Համագործակցային աշխատանքի արդյունքում ընդլայնվում են սովորողների բառակազմական, ուղղագրական, լեզվաքերականական գիտելիքները: Նյութի յուրացումից հետո հանձնարարվում են վարժություններ և առաջադրանքներ, որոնք, ըստ ուսուցչի հայեցողության, կարող են կատարվել տանը կամ հաջորդ դասաժամին:

Առաջադրանքներ և վարժություններ

1. *Տրված բնագրում գտե՛ք համադրական բարդությունները և լրացրե՛ք դրանք ներքոհիշյալ աղյուսակում՝ կիրառելով ՓԳՀ (փոխգործուն գրառումների համակարգ) մեթոդը:*

Մի անգամ միայն ցանկապատի հետևից ինձ նայեց ու ժպտաց: Թվաց, թե հացի շորը դիտմամբ վեր գցեց, որ կռանա ու մի քիչ ավելի կանգնի: Գուցե այդպես չէր, գուցե իրոք շորը սահեց, ընկավ: Հիմա էլ պարզ տեսնում եմ նրա դեմքը ցանկապատի փշերի արանքից: Նույն աչքերն էին, ինչպես բարեկենդանի օրը կտուրի վրա: Նրա աչքերի մեջ մանկական արտահայտություն կար, թեև տասնհինգ տարեկան էր, և ամուր կոճկած զգեստի տակ երևում էր հասուն կուրծքը:

Նմուշօրինակ.

գիտեմ (V)	**չգիտեմ (+)**	**Հակասում է իմ իմացածին (-)**	**անհասկանալի է (?)**	**հետաքրքիր է (!)**
պարզեիպարզ	ամոթխած		ցանկապատ	բարեկենդան

2. *Ընդգծված պարզ և ածանցավոր բառերը փոխարինե՛ք համադրական բարդություններով և որոշել դրանց տեսակը:*

Գարնանային <u>առավոտը</u> խոստանում էր <u>պայծառ</u> և <u>արևոտ</u> օր: Կուշտ կերած մեր ձիերը <u>արագ</u> քայլերով բարձրանում էին <u>քարոտ</u> արահետը և ամեն <u>քայլին</u> փնչացնում: Քրտինքից խոնավացել էր ձիերի <u>կապույտ</u> վիզը:

Գարնան ջինջ երկնքի վրայով սահում էր մի սպիտակ ամպ, ասես արար աշխարհին հպարտությամբ ցույց էր տալիս, որ անհաս բարձունքում լողում է արևի շողերի մեջ:

Նմուշօրինակ՝

առավոտ **-** այգաբաց, իսկական բարդություն, հոդակապով

3. *Գտե՛ք տրված բարդությունների արմատները և դրանցից մեկի հնչյունափոխությամբ նոր համադրական բարդությունն՝ե՛ր կազմեք.*

լուսամուտ,մտասույզ, մրջնաբույն, քաղցրասեր, գեղաշուք, մարմարաշեն, կարեվեր, կարմրադեղին, ասուլիս, պարահանդես:

Նմուշօրինակ՝

լուսամուտ - հետամտել

4. *Տրված բառերում գտնել հնչյունափոխված արմատները և դրանց անհնչյունափոխ ձևերով կազմել համադրական բարդություններ.*

հնոցապան, սննդակարգ, գրբաց, բուսակեր, մորապապ, հնգաթև, մթնկա, միջնաբերդ, կիսադեմ, բնավեր:

Նմուշօրինակ՝

հնոցապան - բազմահուն

5. *Տրված արմատները բարդելով սկզբից և վերջից՝ կազմել համադրական բարդություններ.*

հայր, ծառ, որդի, քար, փակ, ափ, հաց, հարց, չափ, մութ:

Նմուշօրինակ՝

հայր - վանահայր, հորեղբայր

ԱԾԱՆՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ‹‹ՎԵՑ ԳԼԽԱՐԿ›› ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՆԱՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔՈՒՄ

Աշակերտների հետ աշխատանքն առավել ակտիվ և ստեղծագործական է ստացվում, երբ սովորողները մտածում են, օրինակներ բերում, սահմանումներ ձևակերպում՝ չընդօրինակելով ո՛չ ուսուցչի, ո՛չ դասընկերների խոսքը:

‹‹Վեց գլխարկ›› մեթոդական հնարը կարելի է կիրառել դասի ժամանակ, երբ լեզվական գիտելիքների տարբեր մակարդակների տեր աշակերտներ քննարկում են միևնույն խնդիրը և ունեն իրենց մոտեցումները: Յուրաքանչյուր ‹‹ մտածող գլխարկ » տարբեր մտածելակերպի դրսևորում է: Հնարի ընթացքը. դասարանը բաժանվում է վեց մասի, յուրաքանչյուր փոքր խումբ վերցնում է առաջարկված վեց գույն ունեցող գլխարկներից մեկը: Խմբերին բաժանվում է քննարկվող նյութը: Խմբերը կարդում են նյութը, ներկայացնում այն ըստ իրենց գույնի բնութագրիչների: Գույների բնութագրերը ներկայացված են ստորև:

Սպիտակ գլխարկ*:* Այս գույնը խորհրդանշում է չեզոքություն: Այս ‹‹ մըտածող գըլխարկ» ունեցող մասնակիցները կենտրոնանում են առկա տվյալների վրա, ուսումնասիրում են այն տեղեկատվությունը, որն ունեն ձեռքի տակ, վերլուծում և տեսնում՝ ինչ կարող են սովորել դրանցից, որոնում են իրենց գիտելիքների մեջ եղած բացերը և փորձում լրացնել դրանք:

Սև գլխարկ*:* Օգտագործելով սև գլխարկը՝ մասնակիցները ուշադրություն են դարձնում որոշման հնարավոր բացասական արդյունքներին: Փորձում են հասկանալ՝ որն է խնդիրը: Այստեղ կարևորվում են հարցի պրոբլեմային կողմերը: Մասնակիցները վերհանում են դրանք, քննարկում և վերջնական պատասխան տալիս: «*Սև գլխարկը*» կարող է օգնել հասկանալու սխալները և շտկելու դրանք: Սա այս խմբի դրական կողմերից մեկն է, քանի որ

շատ սովորողներ, տիրապետելով նյութին, ուշադրություն չեն դարձնում հավանական սխալներին :

Կապույտ գլխարկ*:* Այս մոտեցումը ենթադրում է գործընթացի վերահսկողություն, երբ խնդրի լուծման ժամանակ դժվարություններ են առաջանում: Կապույտ գլխարկ կրողները օգնության են կանչում կանաչ գլխարկ կրողներին, այսինքն՝ ստեղծարարներին, իսկ երբ, օրինակ, անսպասելի հարցեր են ծագում, օգնության են կանչում կարմիր գլխարկ կրողներին:

Կանաչ գլխարկ*:* Սա ստեղծարարության գույնն է, երբ խնդրի լուծմանը պետք է մոտենալ ստեղծագործաբար: Կանաչ գլխարկը ազատ մտածողության արտահայտություն է, որտեղ նոր գաղափարները քիչ են քննադատվում:

Դեղին գլխարկ: Այս գլխարկն օգնում է դրական լույսի ներքո դիտարկելու առաջ քաշված խնդիրը: Սա լավատեսական մոտեցում է, որն օգնում է տեսնելու որոշման բոլոր առավելությունները և դրանց արժեքը: Մտածողության այս ձևը օգնում է շարունակելու աշխատանքը, երբ ամեն ինչ խճճված է և թվում է դժվարհաղթահարելի:

Կարմիր գլխարկ: Հագնելով կարմիր գլխարկը՝ մասնակիցները ուսումնասիրում են խնդիրները՝ օգտագործելով իրենց ինտուիցիան և ռեակցիան: Փորձում են հասկանալ նաև, թե ինչպես կարող են ուրիշները նույն հարցին անհատական մոտեցում ցուցաբերել, հասկանալ այն մարդկանց արձագանքը, ովքեր դեռևս ամբողջովին ծանոթ չեն իրենց հիմնավորումներին: [5]

Այս հնարը կիրառելը չափազանց դժվար է լեզվի որևէ թեմա քննարկելու ժամանակ, այնուամենայնիվ, փորձենք այն կիրառել **«Ածանց և ածանցում»** *բաժինն ուսումնասիրելիս: Կարելի է կատարել նյութի համապատասխան բաշխում ըստ գլխարկների գույների՝ տալով անհրաժեշտ հրահանգներ:*

[5] Գ.Վարդանյան, Հին ու նոր մեթոդները դասավանդման արդի փուլում, Ե., 2019, 33 – 38 էջեր:

ՍՊԻՏԱԿ ԳԼԽԱՐԿ

Բանալի բառեր
տարբեր իմաստներ
երկրորդական բառակազմական ձևույթներ
միևնույն հնչյունակազմ

ՀԱՄԱՆՈՒՆ ԱԾԱՆՑՆԵՐ

-անի՝	*-անի՝*
-անակ՝	*-անակ՝*
-ոց՝	*-ոց՝*

Հանձնարարական 1 - Օգտվելով ‹‹Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու›› և ‹‹Հնչյունաբանություն›› [6]գրքերից՝ ձևակերպե՛ք համանուն բառերի սահմանումը, տրված ածանցների դիմաց գրե՛ք իմաստները և դրանցով կազմե՛ք բառեր:

Նմուշօրինակ՝ *-անի* («ինչ- որ բան ունեցողի») *լեզվանի, գեղանի*

-անի (հոգնակի հավաքականի նշանակություն) *նամականի, ավազանի*

ՀՈՄԱՆԻՇ ԱԾԱՆՑՆԵՐ

ան-	*ապ-*	*դժ-*	*տ-*	*չ-*
-բար	*-պես*	*-որեն*		
-ային	*-ական*			
ան-	-ատ			

Բանալի բառեր
տարբեր հնչյունակազմ
երկրորդական բառակազմական ձևույթներ
նույն կամ մոտ իմաստներ

Հանձնարարական 1 - Օգտվելով ‹‹Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու›› և ‹‹Հնչյունաբանություն›› գրքերից՝ ձևակերպե՛ք հոմանիշ բառերի սահմանումը, տրված ածանցների դիմաց գրե՛ք իմաստները և դրանցով կազմե՛ք բառեր:

Նմուշօրինակ՝ անբախտ – ապաբախտ - դժբախտ

[6] Գ. Խալաթյան, Ռ. Ջուլֆայան, Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու,Ե., 2014, էջ 24:

Առաջադրանք: Տրված կաղապարներին համապատասխան գրե՛ք օրինակներ:

- ✓ նախածանցը հոմանիշ է նախածանցին
- ✓ վերջածանցը հոմանիշ է վերջածանցին
- ✓ նախածանցը հոմանիշ է վերջածանցին

ՀԱԿԱՆԻՇ ԱԾԱՆՑՆԵՐ

համ-	հակ-
արտ-	ներ-
ներ-	բաց-
-ավոր	ան-
-ուն	ան-
-ավոր	-ատ

Բանալի բառեր
տարբեր հնչյունակազմ
երկրորդական
բառակազմական ձևույթներ
հակադիր իմաստներ

Հանձնարարական 1 - Օգտվելով ‹‹Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու›› և ‹‹Հնչյունաբանություն›› գրքերից՝ ձևակերպե՛ք հականիշ բառերի սահմանումը, տրված ածանցների դիմաց գրե՛ք իմաստները և դրանցով կազմե՛ք բառեր:

Նմուշօրինակ՝ համակրել – հակակրել

Առաջադրանք: Տրված կաղապարներին համապատասխան գրե՛ք օրինակներ:

- ✓ նախածանցը հոմանիշ է նախածանցին
- ✓ վերջածանցը հոմանիշ է վերջածանցին
- ✓ նախածանցը հոմանիշ է վերջածանցին
  - գոյականակերտ ածանցներ
  - ածականակերտ ածանցներ
  - մակբայակերտ ածանցներ
  - թվականակերտ ածանցներ
  - բայական ածանցներ[7]

[7] Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, 261-264 էջեր :

Հանձնարարական 1 - Օգտվելով ‹‹Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու›› և ‹‹Հնչյունաբանություն›› գրքերից՝ *ձևակերպե՛ք ածանցների սահմանումը՝ ըստ խոսքի մաս կերտելու հատկանիշի, գրե՛ք համապատասխան ածանցները և դրանցով կազմե՛ք բառաշարքեր:*

Հանձնարարական 2 - Առանձնացրե՛ք երկարժեք՝ միաժամանակ և՛ գոյական, և՛ ածական կերտող ածանցները և դրանցով կազմե՛ք բառաշարքեր:

Նմուշօրինակ՝ իչ / գոյականակերտ/ – գրիչ, բրիչ, տպիչ

իչ / ածականակերտ/ – թռվիչ, դյութիչ, գրավիչ

ԿԱՊՈՒՅՏ ԳԼԽԱՐԿ

ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՁԵՎՈՒՅԹՆԵՐ

արմատ **ածանց**

Բազմագործառույթ ձևույթ ասելով՝ նկատի ունենք ձևով նույն, սակայն տարբեր գործառույթներ կատարող հնչյունախմբերը՝ արմատը կամ ածանցը: Երբեմն որոշ արմատներից առաջացած ածանցները շարունակում են կապված մնալ իրենց սերող ձևերի՝ արմատների հետ՝ միջին տեղ գրավելով արմատի և ածանցի միջև: Սրանք կոչվում են ածանցակերպներ: Օրինակ՝

Արմատ	***Ածանց***
առ	առ-
ատ	ատ-
արդ	-արդ
արտ	արտ-
բաց	բաց-
գույն	-գույն
հակ	հակ-...

Հանձնարարական 1 - Տրված հնչյունախմբերով կազմե՛ք բառեր այնպես, որ մի դեպքում ձևույթը լինի արմատ, մյուս դեպքում՝ ածանց:

Նմուշօրինակ՝ առ (արմատ) - առևտուր, հոգեառ, արևառ,

առ (ածանց) - առմիշտ, առայժմ, առողջ

ԿԱՆԱՉ ԳԼԽԱՐԿ

ՄԵՆԻՄԱՍՏ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԱԾԱՆՑՆԵՐ

Հանձնարարական 1 - *Օգտվելով մենիմաստ և բազմիմաստ բառերի սահմանումներից՝ ձևակերպե՛ք մենիմաստ և բազմիմաստ ածանցները, գրե՛ք համապատասխան ածանցները և դրանցով կազմեք բառաշարքեր:*[8]

Առաջադրանք: Առանձնացրե՛ք մենիմաստ և բազմիմաստ ածանցները, բացատրե՛ք իմաստները և դրանցով կազմեք՛ բառեր:

չ- -ենի -ուհի -ական -արդ -ավետ

-ային -ստան -ուտ դժ- -գար -ոց

-ոն -յա տ- - արան -պան -ակ

Նմուշօրինակ՝ չ- (մենիմաստ) -ժխտական նախածանց՝ չհաս, չկամ, չտես...

-ենի (բազմիմաստ)-1. ծառի, տունկի, բույսի նշանակություն՝ *թթենի, վարդենի, մասրենի*, 2. կենդանու մորթուց պատրաստված հագուստի, մսի նշանակություն՝ *վագրենի, արծվենի, խոզենի*, 3. ինչ-որ բան ունենալու, հատկանիշով օժտված լինելու նշանակություն՝ *մայրենի, քաղքենի, վայրենի:*

[8] Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, 225-227 էջեր:

ԴԵՂԻՆ ԳԼԽԱՐԿ [9]

ԱԾԱՆՑՆԵՐՆ ԸՍՏ ԴԻՐՔԻ

ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ ՄԻՋԱԾԱՆՑՆԵՐ

Նախածանցները արմատի կամ բառի սկզբում դրվող և նոր բառեր կազմող երկրորդական բառակազմական ձևույթներ են, օրինակ՝ *տաքա-ժամ, ղժպատեհ, արտասահման, հաքակից, տրամաբան:*

Վերջածանցները արմատի կամ բառի վերջում դրվող և նոր բառեր կազմող երկրորդական բառակազմական ձևույթներ են, օրինակ՝ *թթենի, զբաղ-մունք, հայրական, խոսվածք, մարտիկ*:

Միջածանցները հիմնական ձևույթների՝ արմատների ներսում հանդես եկող և նրանց նոր իմաստներ հաղորդող երկրորդական բառակազմական ձևույթներ են: Հայերենում սրանք *լ, ր, ն* հնչյուններն են, որոնք իրենց սաստկական իմաստով և գործառույթով կապված են բնաձայնական բառերի հետ, օրինակ՝ *ղղխկալ, բաղաչել, փղշտալ,կլանչ*:[10]

Հանձնարարական 1 - Օգտվելով Ա. Աբրահամյանի ‹‹ Բայը ժամանակակից հայերենում››/Ե.,1962/ աշխատությունից՝ որոշե՛ք՝ բայածանցները միջածա՞նց են, թե՞ վերջածանց, և պատճառաբանե՛ք ձեր սահմանումը:

[9] Այս գլխարկը պետք է ընտրեն որոնողական աշխատանք սիրող սովորողները:
[10] Գ. Ջահուկյան , Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1988, էջ 159:

ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ

ԱԾԱՆՑՆԵՐՆ ԸՍՏ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԱԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ

ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱԾԱՆՑՆԵՐ

Այս ածանցներն ունեն բառակազմական ակտիվություն:

ՈՉ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱԾԱՆՑՆԵՐ

Այս ածանցները չունեն բառակազմական ակտիվություն:[11]

Առաջադրանք: Առանձնացրե՛ք կենսունակ և ոչ կենսունակ ածանցները, բացատրե՛ք իմաստները և դրանցով կազմեք՛ բառեր:

-ակ -իճ -ային -գար -աշ -ակի -արակ -իվ -ություն
-իլ -ական -կեն -ույկ -ենի -ուն -ք

Նմուշօրինակ՝ -ակ / կենսունակ ածանց/ - դրոշակ, լճակ, իմաստակ, պահակ
-իճ / ոչ կենսունակ / - կավիճ, կտրիճ, ուտիճ

ԼՐԱՑՈՒՄ ⟶ **ՓՈԽԱՌՅԱԼ ԱԾԱՆՑՆԵՐ**

-իստ / եվրոպական լեզուներից/ - *թառ<u>իստ</u>, բուդդ<u>իստ</u>*

-պան / պարսկերենից/ - *պարտիզ<u>պան</u>, ուղտա<u>պան</u>*

-ստան / պարսկերենից/ - *մենա<u>ստան</u>, բուրա<u>ստան</u>*

-ուհի / պարսկերենից / - *թագ<u>ուհի</u>, հայ<u>ուհի</u>*

---

[11] Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջեր 260-261:

Համագործակցային քննարկում քարտերով

Համագործակցային քննարկումը սովորողների հաղորդակցման և ստացած գիտելիքները ամփոփելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները խոսելու հնարավորություն ունեն (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են): Այս եղանակի փուլերն են.

• Քննարկումը վարողը (դասավանդող) թեմայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում: Այդ հայտարարությունները փակցվում են սենյակի տարբեր մասերում:

• Յուրաքանչյուր սովորող, ըստ իր ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ:

• Քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցրած հայտարարությունը ներկայացնելու համար:

• Յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին:

• Խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «քննարկման քարտեր» (քանակը կախված է քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):

• Խմբի անդամները կանգնում են իրենց խոսնակի հետևում և նույնպես քարտեր են ստանում: Քարտերն օգտագործվում են հետևում կանգնած սովորողներին քննարկման մեջ ներգրավելու համար: Որպես այլընտրանք՝ խմբի անդամներն իրենց քարտերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր քարտերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի:

• Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր քարտերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Քարտերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ քարտ է: Այս եղանակն օգտագործելով՝ դասավանդողը ոչ միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև մասնակիցներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

Այս հնարը հաջողությամբ կարելի է կիրառել «Ածանց և ածանցում» թեմային առնչվող մի քանի հետաքրքրական հարցեր քննարկելիս:

Քայլ 1. Հակասական հայտարարություններ.

ա. Հայերենի բայածանցները միջածանցներ են:

Հայերենի բայածանցները վերջածանցներ են:

բ. -յան, -դժ ածանցները փոխառյալ են:

-յան, -դժ ածանցները բնիկ հայերեն են:

գ. –իլ, -իճ, -աշ, -ունի, -ունչ ածանցները կենսունակ են:

–իլ, -իճ, -աշ, -ունի, -ունչ ածանցները ոչ կենսունակ են:

Քայլ 2. Մասնակիցներից յուրաքանչյուրն ընտրում է այն միտքը, որն իր կարծիքով ճիշտ է և ներկայացնում է փաստարկներ, որոնք կամրապնդեն ընտրված դատողությունը: Օրինակ՝

–իլ, -իճ, -աշ, -ունի, -ունչ ածանցները ոչ կենսունակ են*:*

Միտքը հաստատող դատողություններ.

1. Քանի որ այս ածանցներով նոր բառեր չեն կազմվում:
2. Քանի որ վերոնշյալ ածանցներով կազմությունները սակավաթիվ են:

Քայլ 3. Քանի որ հակասական հայտարարությունները երեքն են, ապա ձևավորվում է երեքական խումբ, յուրաքանչյուր խմբում՝ որոշակի թվով մարդիկ, ովքեր կողմ են հատկապես այդ մտքին: Նրանք ընտրում են իրենց խոսնակին:

Քայլ 4. Խոսնակները նստում են կլոր սեղանի շուրջ, նրանց կողմնակիցները կանգնում են նրանց գլխավերևում՝ ձեռքերին ունենալով այնքան քարտ, որքան դատողություն ունեն տվյալ միտքը հաստատելու համար:

-իլ - կաթիլ, փաթիլ, տեսիլ	–ունի - ծերունի, արքունի, տերունի,
-ունչ - անտերունչ, անմռունչ	-աշ – *կարմրաշ, մատղաշ,թթվաշ*
-իճ- ուտիճ, կավիճ, կտրիճ	-կեն –ցանցկեն, հյուսկեն, ծակոտկեն,

Քայլ 5. Խոսնակները հերթով ներկայացնում են իրենց ապացույց-մտքերը՝ յուրաքանչյուր միտք ներկայացնելուց հետո սեղանին դնելով իրենց քարտը (անհրաժեշտության դեպքում համախոհները կարող են տալ իրենց քարտերը և ավելացնել իրենց ընտրած միտքը ամրապնդող ևս մի փաստարկ): Ժամանակն արդյունավետ օգտագործելու համար կազմակերպիչը կարող է խնդրել մտքերը ձևակերպել հակիրճ և պարզ:

Այս հնարը հնարավորություն է ընձեռում մասնակիցներին փաստերով ներկայացնելու հակասական հայտարարություններից ընտրված ճիշտ պատասխանները և հակիրճ մեկնաբանելու դրանք:

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Սովորողների հետ աշխատանքն առավել ակտիվ և ստեղծագործական է ստացվում, երբ հարցերը ենթադրում են բազմապատասխան ձևակերպումներ, երբ սովորողները մտածում են, օրինակներ բերում, սահմանումներ ձևակերպում՝ չընդօրինակելով ո՛չ ուսուցչի, ո՛չ դասընկերների խոսքը:

Բայածանցները ճանաչելու, ածանցավոր բայերի իմաստային և քերականական առանձնահատկությունները պարզելու, քերականական համանունների շփոթը կանխելու, լեզվական կարողություններ մշակելու նպատակով շահավետ է կիրառել մեր կողմից ընտրված ‹‹Կարկանդակ›› մեթոդը և ‹‹Ավտոբուսային կանգառ›› մեթոդական հնարը:

Վերոնշյալ մեթոդները կիրառում ենք նյութի ամփոփման դասի ընթացքում՝ նախանշելով հետևյալ քայլաշարերը:

1.Թեմայի առաջադրում, հարցերի ձևակերպում, դասագործընթացի ակտիվացում:

2.Նախորդ դասերի ժամանակ ձեռք բերած գիտելիքների ու կարողությունների ամրակայում: Յուրաքանչյուր աշակերտի մասնակցության ապահովման ճանապարհով և նորագույն մեթոդների գործադրումով նոր գիտելիքի ձեռքբերում:

3.Մտքերի ակտիվ փոխանակման ճանապարհով սովորողների ներգրավում նոր նյութի բովանդակության մեջ, ուսուցչի առաջադրած հենակետային հարցերի միջոցով ուսուցանվող նյութի տարբերակային վերլուծություն, ընդհանրացումների կատարում, եզրակացությունների, սահմանումների ձևակերպում:

4.Կիրառական վարժությունների կատարում, ձեռք բերած տեսական գիտելիքի իմաստավորում, ամրակայում:

Ըստ ***‹‹ Կարկանդակ››*** ***(****Pie****)*** *մեթոդի՝ մասնակիցները կազմում են շրջան, որի կենտրոնում գրված է թեման կամ հետազոտվող հարցը: Ուսուցիչը շրջանը բաժանում է 4 մասի՝ըստ ենթատեսակների:*

Բայածանցներ



Մասնակիցներին հանձնարարվում է գրել յուրաքանչյուր ենթատեսակի սահմանումը: Հանձնարարության վերջում ‹‹կարկանդակի››՝իրենց հատկացված բաժինների վրա ներկայացնում են այն մտքերը, որոնք էլ կազմում են ընդհանուր թեման:

Աշխատանքից հետո ուսուցիչը միացնում է կարկանդակի չորս մասերը, բարձրաձայն ընթերցում խմբերի գրածները և ամփոփում՝ասելով, որ սահմանումները իսկապես բնորոշ են բայածանցներին:

Բայածանցների ամփոփման դասի շրջանակներում անդրադառնում ենք այն պրոբլեմային հարցերին, որոնք առաջանում են ածանցները տարբերակելիս: Պրոբլեմային հարցերի վերլուծության նպատակով կիրառում ենք **‹‹ Ավտոբուսային կանգառ››**[12] մեթոդական հնարը:

[12] Մեթոդները վերցվել են http://ped-kopilka.ru/blogs/nadezhda-nikolaevna-dobreckaja/opisanie-aktivnogo-metoda-obuchenija-avtobusnaja-ostanovka.html կայքից:

Այս հնարը խմբային աշխատանքի շնորհիվ բոլոր խմբերի հետ աշխատելու հնարավորություն է տալիս՝ծանոթանալով այլ խմբերի տեսակետներին և հավելելով սեփականը:

Քայլ 1. Դասարանը բաժանվում է խմբերի:

Քայլ 2. Խմբերին առաջարկվում է նստել նախօրոք պատրաստված սեղանների շուրջ, որտեղ դրված են կանգառի անունը և նյութին վերաբերող մեկ-երկու պրոբլեմային հարց:

Քայլ 3. Խմբերին բաժանվում է ուսումնասիրվող նյութը/‹‹կարկանդակի կտոր››, ստվարաթուղթ և թանձրագրիչ:

Քայլ 4. Յուրաքանչյուր խումբ 5-7 րոպեի ընթացքում կարդում է նյութը (նաև դասագրքային) և ստվարաթղթի վրա գրում իր հարցին վերաբերող 2-3 ընդհանրացում (ստվարաթուղթը պետք է մնա այդ սեղանին):

Քայլ 5. Այնուհետև յուրաքանչյուր խումբ պտտվում է ժամացույցի սլաքի ուղղությամբ և հայտնվում մյուս սեղանի մոտ, ստվարաթղթի վրա ավելացնում մյուս խմբի հարցին վերաբերող 1-2 միտք, այդ թվում՝ նաև պատասխան ու շարժվում առաջ:
Նկատառում. չի կարելի արդեն գրված մտքի վրա որևէ ուղղում կամ ավելացում կատարել:

Քայլ 6. Չորս սեղաններին մոտենալուց և գրառումներ կատարելուց հետո յուրաքանչյուր խումբ վերջում հայտնվում է իր հիմնական սեղանի մոտ և 3 րոպե ծանոթանում բոլոր գրառումներին:

Քայլ 7. Ավարտին յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր հարցի էությունը՝ ըստ գրառումների:

Կանգառ 1-ին



Սոսկածանցների (ըստ Ա. Աբրահամյանի՝ բաղադրության քերականական ածանցներ) [13] ընդհանուր կողմերը հաշվի առնելով՝ Ա. Աբրահամյանը իրավամբ նկատում է, որ ժամանակակից գրական հայերենում այս ածանցների դերը աննշանակ ու ավելորդ չէ: Դրանք ունեն կերպային (տևական) որոշ երանգ, որը կապված է այդ ածանցների գործադրման հետ (*ցանկալ-ցանկանալ, փափկել-փափկանալ* և այլն): Երբեմն ածանցազուրկ և ածանցական զույգերը դրսևորում են բառական իմաստի տարբերություններ: Դիմում ենք համեմատության հնարին: Գրում ենք մի քանի բառազույգեր և աշակերտների օգնությամբ բացատրում դրանց իմաստները.

ձևել՝ կտրել (կտորը ձևել) - *ձևանալ*՝ դառնալ, երևալ (համեստ ձևանալ),

նեղել՝ նեղություն տալ, անհանգստացնել - *նեղանալ*՝ նեղ դառնալ, մտնել, քաշվել (շորը),

բարդել՝ դիզել, կուտակել - *բարդանալ*՝ դժվարանալ, խճճվել, խրթին դառնալ (խնդիրը),

կոպտել՝ վիրավորվել, նախատել – *կոպտանալ*՝ կոշտանալ, կարծրանալ,

լողալ՝ լող տալ (գետում) - *լողանալ*՝ մարմինը լվանալ (լոգարանում):

Բառակազմական հմտություններ ձևավորելու, բայերի իմաստները տարբերակելու նպատակով աշակերտներին տեղեկացնում ենք, որ սոսկական ածանցներից ամենագործածականը *-ան* ածանցն է, որով այսօր էլ բայեր են կազմվում, իսկ *-են, -ն, -չ* ածանցները հանդես են գալիս սահմանափակ թվով բայերի մեջ և գործուն չեն:

[13] Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962 , էջ 213:

Կանգառ 2-րդ



Բազմապատկական ածանցներով ածանցվող բայատիպերը[14] դրսևորում են մեկ կամ բազմաթիվ առարկաների գործողության կամ եղելության բազմապատիկ կամ հաճախական կատարումը:

Բազմապատկական բայերը բացառապես հանդես են գալիս *ե* լծորդության բայերի մեջ (*թռչկոտել, նստոտել, կտրտել*):

Հաճախ

✓ ***Ոտ*** բազմապատկական ածանցը շփոթում են ածականակերտ ***ոտ*** ածանցի հետ, որը հանդես է գալիս նաև ածականներից կազմված բայերի կազմում :

✓ Պետք է նկատի ունենալ, որ նույն ածանցով բայերը երբեմն դրսևորում են երկարժեքություն (*երկարժեք բայերի բացատրությունները ստուգվում են բառարաններով*)՝ արտահայտելով մի դեպքում բազմապատկականության, մի այլ դեպքում ածականական իմաստ:

Ածականական հիմքով	**Բազմապատկական բայեր**	**Երկարժեքություն**
կեղտոտ-կեղտոտել	գրել-գրոտել	*թքոտել*
փոշոտ-փոշոտել	ջարդել-ջարդոտել	*ջրոտել*
թանաքոտ-թանաքոտել	նստել-նստոտել	
յուղոտ – յուղոտել	ցատկել-ցատկոտել	
մրոտ-մրոտել	խոցել - խոցոտել	

[14] Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962 , էջ 269:

✓ **Ատ** բազմապատկական ածանցը չպետք է շփոթել բայերի մեջ հանդես եկող **ատ** ածանցի հետ, որն առաջացել է *հատ* արմատից *հ* բաղաձայնի անկումով և իմաստի մթագնումով.

կիսատել, հորատել, գլխատել

բայց

կտրատել, խածատել (բազմապատկական)

Կան նաև բայեր, որոնք կազմվում են պարզ հիմքերով. ***–ոտ*** –ը և ***-ատ***-ը արմատի բաղադրիչ են:

Պարզ հիմքով բայեր

որոտալ *մկրատել*

կարոտել *փարատել*

✓ Արմատի կրկնությամբ կազմված բազմապատկական բայերի հետ չպետք է շփոթել կրկնավոր մի շարք բայական բարդություններ, որոնք չունեն իրենց ոչ կրկնավոր տարբերակը:

հռհռալ, սրթսրթալ, կոթկոթալ ,

բայց

վազվզել, գոռգոռալ (բազմապատկական),

Կանգառ 3-րդ



Պատճառական ածանցը, ավելանալով բայի սկզբնաձևին, ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի դեպքում ենթական պատճառ է լինում, որ գործողությունը կատարվի: Պատճառական ***ցն*** ածանցը հաճախ հանդես է

գալիս *ա* և *ե* լծորդ ձայնավորների հետ՝ ստեղծելով *ացն*, *եցն* ձևերը (*խաղացնել, հիշեցնել*): Հիմնականում ավելանում է չեզոք, երբեմն էլ ներգործական բայերի վրա (նստեցնել, հագցնել): Պատճառական բայերը բացարձակապես *ե* խոնարհման են:

Հաճախ

✓ Պատճառական ածանցները շփոթվում են բառարմատում ***g*** ունեցող ոչ պատճառական բայերի հետ:

Տարբերելու համար պետք է կազմենք պատճառական բայերի հարադրական ձևերը ‹‹տալ›› բայով և համեմատության հնարին դիմելով՝ ցույց տալ տարբերությունները:

Պատճառական ածանցով բայեր			**Պատճառական ածանց չունեցող բայեր**	
խոսեցնել	→	խոսել տալ	լցնել	լցնել տալ
վազեցնել	→	վազել տալ	հարցնել	հարցնել տալ
նստեցնել	→	նստել տալ	անցնել	անցնել տալ

Պատճառական հիմքով բայերին ‹‹տալ›› բայն ավելանալիս ***gն*** ածանցն ընկնում է, մինչդեռ ոչ պատճառական հիմքով բայերին ‹‹տալ›› բայն ավելանալիս արմատական ***g*** հնչյունը պահպանվում է:

✓ Պատճառական բայերը շփոթվում են նաև անցյալ կատարյալի ձևերի հետ:

Պետք է նկատի ունենալ, որ պատճառական բայերը չշփոթելու համար ճիշտ է առաջնորդվել իմաստային հիմունքով:

Պատճառական բայերի ցույց տված գործողությունը կատարվում է ուրիշի միջամտությամբ, դրդմամբ, մինչդեռ ոչ պատճառական բայերի (g բաղադրիչ ունեցող) ցույց տված գործողությունը կատարվում է ինքնին:

Անցյալ կատարյալ ժամանակաձև

Պատճառական բայեր	Ոչ պատճառական բայեր
հագցրի	հանգցրի
փախցրի	թաքցրի
կերցրի...	կորցրի...

Կանգառ 4-րդ



Կրավորական ***վ*** ածանցը, դրվելով ներգործական և պատճառական բայերի վրա, դրանք վերածում է կրավորական սեռի (*սիրել- սիրվել, հիշեցնել - հիշեցվել*): Կրավորական բայերը բացառապես *ե* խոնարհման են*:*

Հաճախ

Կրավորական ածանց ունեցող կրավորական սեռի բայերը շփոթվում են –*վ* ածանց ունեցող չեզոք սեռի բայերի հետ(*գունատվել, գանգատվել, բնակվել, այլայլվել*):

Պետք է նկատի ունենալ, որ ժամանակակից հայերենում ***վ*** ածանցը երբեմն գործածվում է որպես բայակազմական բաղադրության ածանց՝ կազմելով կրավորակերպ չեզոք բայեր: Այս բայերը առանց ***վ*** ածանցի գոյություն չունեն (*սիրահարվել, բնակվել, հարձակվել*) :

Ներկայացնենք բայերը աղյուսակներով.

1-ին խմբի բայերը ունեն իրենց առանց ***վ*** ածանցի սկզբնաձևերը, և կատարված գործողությունը անցնում է խնդրին:

2-րդ խմբի բայերը չունեն առանց –***վ*** ածանցի սկզբնաձևերը և կատարված գործողությունը չի անցնում խնդրին:

3-րդ խմբի բայերը թեև ունեն իրենց առանց ***վ*** ածանցի սկզբնաձևերը, սակայն կատարված գործողությունը անդրադառնում է հենց կատարողին:

Կրավորական սեռի բայեր	**Չեզոք սեռի բայեր**	**Անդրադարձ բայեր**
հիշվել (հիշել)	գժվել	հագնվել
սիրվել (սիրել)	սիրահարվել	լվացվել
նկատվել (նկատել)	բնակվել	սափրվել
ջերմացվել (ջերմանալ)	մոլորվել	սանրվել
կարդացվել (կարդալ)	գունատվել	սնգուրվել

Ասպիսով, նորագույն մեթոդներով լեզվական նյութերի ուսուցումը և պրոբլեմային հարցերի առաջադրմամբ դժվարություն ներկայացնող լեզվական խնդիրների լուծումը նպաստում են սովորողների լեզվամտածողության, ինքնուրույն դատողություններ անելու կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Մոդուլային տեխնոլոգիայի էությունն այն է, որ սովորողին տրվում է որոշակի թեմայի համար մշակված ուսումնական նյութի փաթեթ՝ մոդուլ, որը սովորողն ինքնուրույն ուսումնասիրում և յուրացնում է: Մոդուլը մի ամբողջություն է, որի մեջ մտնում են թե՛ ուսումնական նյութի բովանդակությունը, թե՛ դա յուրացնելու տեխնոլոգիան: Մոդուլը կազմված է՝

- գործողությունների նպատակային պլանից
- տեղեկատվության կամ նյութի շարադրանքից
- ուսուցման գործընթացը կարգավորող մեթոդական ցուցումներից

Այս տեխնոլոգիան կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է մշակի յուրաքանչյուր դասարանի կամ լսարանի ուսումնական նյութին համապատասխան մոդուլային ուսումնական ծրագիր, ընդգծի դրանցից ամեն մեկի նպատակները: Այդ նպատակով պիտի առանձնացվեն հայոց լեզվի և հայ գրականության առարկաների ուսումնական բովանդակության հիմնական գիտական խմբավորումներ: Դրանից հետո ձևավորվում է ընդհանրական դիդակտիկ-ուսումնական նպատակադրումը, որը պիտի բաղկացած լինի երկու աստիճանից՝ ա) ուսումնական նյութի բովանդակության յուրացման աստիճան, բ) նյութի կիրարկման, ուսուցման հետագա ընթացքում կիրառելու կարողության աստիճան:

Մոդուլները երեք տեսակ են լինում.

- ճանաչողական, որոնք կիրառվում են գիտության հիմունքների ուսուցման ընթացքում
- գործառնական, որոնք անհրաժեշտ են գործունեության եղանակների ձևավորման և զարգացման համար

- խառը, որոնք ներառում են առաջին երկու տեսակները:

Մոդուլային տեխնոլոգիայի կիրառման դեպքում սովորողը վարժվում և սովորում է ինքնուրույնության, նախաձեռնության, կազմակերպվածության, աշխատանքի ծրագրման և պլանավորման, ինքնահսկման և ինքնագնահատման: Սովորողը գիտակցված և իմաստավորված մոտեցում է հանդես բերում ուսումնական գործընթացի հանդեպ, սովորում է տեսնել իր գիտելիքների և կարողությունների ուժեղ և թույլ կողմերը, դրանց ձեռքբերման աստիճանը:

Այս տեխնոլոգիան կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է մշակի յուրաքանչյուր դասարանի ուսումնական նյութին համապատասխան մոդուլային ուսումնական ծրագիր, ընդգծի դրանցից ամեն մեկի նպատակները: Տեխնոլոգիան ուսուցչին հնարավորություն կտա անհատական աշխատանք կազմակերպելու ամեն մի սովորողի հետ:

Մոդուլները կարող են կիրառվել ուսուցման կազմակերպման ցանկացած ոլորտում՝ բարելավելու ուսումնառության գործընթացը և ապահովելու դրա արդյունավետության բարձրացումը: Մոդուլային և ավանդական ուսուցման տեխնոլոգիաների համատեղումը խիստ արդյունավետ կարող է լինել:

Այս տեխնոլոգիայի գործադրումը նախատեսել ենք գրաբարյան նախադիրների անցած ուղու, դրանց կրած փոփոխությունների, կիրառության առանձնահատկությունների ուսուցման գործընթացում կիրառելու նպատակով: Նյութի մատուցման համար թիրախային խումբ ենք ընտրել ավագ դպրոցի հումանիտար հոսքը: Դասավանդողը հստակ պետք է նշի, կոնկրետացնի նյութի ուսուցման նպատակը. այն է՝ լեզվական համակարգի միավորների փոխկապակցվածության և խոսքում նրանց կատարած դերի գիտակցումը, բառակազմական եղանակների մեջ անմիջական դեր կատարող միավորների՝ բաղադրիչների դերն ու նշանակությունը, բառերի բառակազմական և այլ մակարդակներում դրանց տարբերակումը:

Ի՞նչ գիտական խմբավորումներ ենք արել: Մոդուլային տեխնոլոգիայով նախատեսված նախնական քայլը ուսումնական նյութի ամբողջական փաթեթի տրամադրումն է սովորողներին. սրա ուսումնասիրությունը միտված է նյութը յուրացնելուն և կիրառելուն:

Ուսումնական նյութի ամբողջական փաթեթն ունի իր բովանդակային բաղկացուցիչները

- ***Տեսական նյութի ներկայացում***

Գրաբարում բավականաչափ լայն տարածում են ունեցել նախդիրները և նախադրությունները, որոնք ունեին սպասարկու դեր. սպասարկում էին հոլովական համակարգին: Գրաբարի վեց հոլովաձևերը քերականական յուրահատուկ ձևավորմամբ արտահայտում էին քերականական որոշակի իմաստներ՝ ցույց տալով առարկաների միջև եղած տարբեր հարաբերություններ: Յուրաքանչյուր հոլովաձև իր հիմնական իմաստի հետ ուներ նաև այլ իմաստներ, որոնք սահմանափակ էին և լիովին չէին արտահայտում առարկաների միջև եղած բոլոր հարաբերությունները: Այստեղ մեծ դեր ունեին սպասարկու բառերը, որոնք գրաբարի քերականության մեջ կոչվում էին նախդիրներ և նախադրություններ :

- Նախդիրները գործածվում էին միայն թեք հոլովների հետ: Ուղղական հոլովի հետ նախդիրներ չեն դրվում:
- Նախդիրները, դրվելով հոլովաձևերի հետ, արտահայտում էին տարածական, ժամանակային, պատճառական, նպատակային, բաշխական, վերաբերական և այլ հարաբերություններ: Նրանք մի հոլովաձևի կարող էին հաղորդել մի այլ հոլովաձևի նշանակություն:
- Գրաբարի բոլոր նախդիրները, բացի ***g*** նախդիրից, գործածվում էին մի քանի հոլովների հետ:
- Նախդիրները հոլովաձևերի հետ հանդես էին գալիս միայն նախադաս: Յուրաքանչյուր բառ միաժամանակ մեկից ավելի նախդիր չէր կարող ունենալ: Երբ նախդիր ունեցող բառը նոր նախդիր էր ստանում, նախորդը

դուրս էր ընկնում և նոր նախդիրը գրավում էր նրա տեղը:

- Այս տեսակետից բացառություն էր կազմում **առ** նախդիրը, որը նույն բառի վրա կարող էր դրվել ***ի*** նախդիրի հետ, օրինակ՝ ‹‹Առ ի տալ պատասխանի›› (Բուզ.):
- Երբ նախդիր կրող բառը նախադաս լրացում էր ստանում, նախդիրն անցնում էր վերջինիս վրա, օրինակ՝‹‹Երկն ի ծովուն ունէր և **զ**կարմրիկն եղեգնիկ… **ընդ** եղեգան փող ծուխ ելանէր››:[15]

Գրաբարյան նախդիրներն են՝

առ զ ընդ ըստ ի(յ) ց

➢ ***Օրինակների գանձանակ***

Բոլոր օրինակները քաղված են Աստվածաշունչ մատյանից:

«Հար կլուծանե ***զ***օրենս»

«Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ բանիւ, որ ելանէ *ի* բերանոյ Աստուծոյ»:

«Լալ *ընդ* լացողս, խնդալ *ընդ* խնդացողս»:

«Ոսկր *յ*ոսկերանց եւ մարմին *ի* մարմնոյ»:

«Ամենայն չարիք մտանեն *ի* միտս մարդոյ յանուսումնութենէ»:

«Իրաքանչիւր ծառ *ի* պտղոյ իւրմէ ճանաչ»:

«Ոչ ոք լուցանէ ***զ***ճրագ եւ թաքուցանէ ***ընդ*** կարասեաւ կամ դնէ ***ընդ*** մահճաք. այլ ի վերա *յ*աշտանակի»:

«Ոչ օգնեսցեն գանձք անօրինաց, այլ արդարութիւն փրկէ ***ի*** մահուանէ»:

«Ոհ, հովիւք, որք *զ*անձինս արածեք եւ ոչ *զ*խաշինս»:

[15]Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 228:

- **Մեկնական տարբերակիչներ**

Գրության առանձնահատկությունները

1. Սրանցից ***զ, ց*** և ***հ*** (ձայնավորով սկսվող բառերից առաջ վերածվում է ***յ***-ի) կցվում էին այն բառերին, որոնց հետ գործածվում էին , օրինակ՝*զ-ջուր, ցայժմ, յանձինս:*

2. ***Առ, ընդ, ըստ*** *և* ***հ*** (բաղաձայնով սկսվող բառերից առաջ) գրվում էին առանձին, օրինակ՝ *առ այն, ընդ որում, ըստ ամենայնի, հ հեճուկս*:

Գրաբարյան նախդիրների կրած տեղաշարժերը

Ժամանակակից հայերենում սրանք կորցրել են իրենց նախդրային արժեքը:

1. Առ-ը և ***ըստ***-ը անջատ գրությամբ ունեն բառային անկախություն՝ իսկական կապեր են՝ նախադրություններ:

2. Զ և ***հ→յ /հ/*** (ձայնավորից առաջ) նախդիրները կորցրել են իրենց բառային (սպասարկու բառեր) անկախությունը և ձուլվել են արմատին:

3. Մյուսները (ց, առ, ընդ, ըստ) իմաստավորվում են կապակցությունների մեջ՝ բառերի հետ գործածվելով կից գրությամբ և ստանալով ածանցի արժեք:

Նախդիրները դեռ վաղ հայերենում կիրառվել են նաև ածանցական նշանակությամբ, օրինակ՝ *ց*այգ(=գիշեր), *ց*երեկ, *ց*մրուր

*առ*ավել, *առ*ողջ, *առ*աջ

*ընդ*ոստ, *ընդ*հանուր, *ընդ*ամենը:[16]

Շատ բառերում նախդիրներն այսօր այնքան սերտ են ձուլված բառարմատին, որ ածանցային արժեքը չի գիտակցվում, օրինակ՝

*ց*անկ, *ց*երեկ

*զ*արդ, *զ*արկ, *զ*եղծ

*հ*անցանք , *հ*արգանք , հանձին

*ըմ*բռնել, *ըն*կեր, *ըն*կալել

---

[16] Ս. Է լ ո յ ա ն, Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963, էջ 57, 73—76:

Համեմատի՛ր

Նախդիրների ածանցական կիրառությունն ընդհանուր երևույթ է նախդիրներ ունեցող լեզուներում: Այս տեսակետից խիստ բնորոշ է ռուսերենը, որտեղ գրեթե բոլոր նախդիրներից առաջացած նախածանցներ կան, որոնք, կենդանի և գործուն լինելով, շատ լայն կիրառություն ունեն ժամանակակից ռուսերենում :

Օրինակ՝ **в** – *в*писать *в*пустить
за-*за*писать *за*пустить
с - *с*писать *с*пустить
на- *на*писать ----------
от - ---------- отпустить և այլն:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին համեմատություն կատարել իրենց իմացած այլ՝ երկրորդ /անգլերեն, ֆրանսերեն/ լեզվի նախածանցավոր բառերի կազմությունների հետ՝ պարզելով նախդիր → նախածանց անցման առկայությունը:

➢ **Գծագրական դասակարգիչներ**

ՄՏՔԻ ՔԱՐՏԵԶ



առ ըստ ընդ ի ց զ



➢ **Որոնողական առաջադրանք**

Օգտվելով Հր. Աճառյանի ‹‹Հայերեն արմատական բառարան››-ից և Ս. Գալստյանի ‹‹Դպրոցական բառակազմական բառարան››-ից՝ բացատրե՛ք տրված բառերում նախդիրների կրած փոփոխությունները.

ի հակադրություն, ընկալել, ընկճել, հոտնկայս, ընդունել, ստանձնել, զառամյալ, առույգ, առողջ, առտնին, առաքել, առինքնել, ինքնըստինքյան, հուրախություն, ըստ կարելվույն, հուղարկավորել, ըմբռնել, անընդմեջ, մերթընդմերթ, անընդհատ, հօգուտ, իզուր, ի գիտություն, հաջող, բերանքսիվայր, իհարկե, հանձին, սարն ի վեր, երեսնիվեր, հևիհև:

Նախդիրների ուսուցումն ամրապնդելու նպատակով առաջարկում ենք **‹‹Բազմակի ընտրություն** (Multiple choice)›› գործնական մեթոդի կիրառումով ամփոփել դասանյութը:

Վարժության այս տարածված ձևը արևմուտքում ստեղծված և ողջ աշխարհում լայնորեն կիրառվող ստուգման միջոց է, որը որոշ վերապահումներով կարելի է կիրառել տարբեր առաջադրանքներում: Այս դեպքում սովորողը պետք է ընտրություն կատարի առաջին հայացքից ճիշտ թվացող և իրականում ճիշտ պատասխանի միջև: Բազմակի ընտրություն ենթադրող վարժությունները ուղղված են սովորողի ուսումնառության տարբեր մակարդակները գնահատելուն: Պետք է նշել, որ գնահատման այս ձևը հուսալի և վստահելի է, քանի որ սովորողը ընտրում և խմբավորում է տրված բառափնջերն ըստ առաջադրվող պահանջի:

Օրինակ՝

Տրված բառաշարքերից ընտրե՛ք և քարտերով ներկայացրե՛ք այն նախդրավոր բառերը, որոնցում՝

Քարտ 1.

Նախդիրները գրվում են անջատ (բառասկզբում և բառամիջում):

Նախդիրները փոխանցվել են ածանցներին:

Քարտ 2.

Նախդիրները գրվում են միասին (բառասկզբում և բառամիջում):

Նախդիրները փոխանցվել են կապերին:

Քարտ 5.

Նախդիրները դարձել են բարդության բաղադրիչ

առ/կախ, ընդ/մեջ, ի/հեճուկս, ըստ/ամյա, ց/այգ, ըստ/ամսյա, ըստ /կարգի, ց/պահանջ, առ/ժամանակ, ի/զուր, ընդ/ունայն, ըստ/այսմ, ընդ/միշտ, առ այդ, ի/հարկե, ց/այսօր, ըստ/ժամյա, ի/սպառ, ի/միջիայլոց, ց/մրուր, ըստ/օրյա, ընդ/ամենայնի, ց/տեսություն, առ/տնին, ըստ/այնմ, առ/Աստված, ընդ/հուպ, ըստ/տողյա, առ/երես, առ/այժմ, առ/ձեռն, ըստ/երևույթին, առ/այն, ընդ/որում, առ/ընթեր, ըստ/այդմ, առերևույթ, ըստ/իս, ռ/այս, մեջ/առ/մեջ, ըստ/արժանվույն, ըստ/էության առ/միշտ, առ/հավետ, ըստ /կարելվույն, դեմ/առ/դեմ, առ/այսօր ըստ/որում, ժամ/առ/ժամ, առդիր, առ/ճակատում, առ/հարյուր, առ/ ոչինչ, առ/հազար, առ/տասը, առ/ավել:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Այսօր առավել քան արդիական է համացանցի միջոցով դասերի նախագծումն ու դրանց մոդելավորումը:

ՎԵԲ-որոնում Web-Quest

Վեբ-որոնումը հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողների ձեռք բերած գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ստացվում են համացանցային աղբյուրներից՝ կայքեր, հանրագիտարաններ, ուսումնական նյութեր, գրադարաններ և այլն: Վեբ-որոնումը չի բացառում նաև տեղեկատվության այլ աղբյուրների՝ գրքեր, հոդվածներ, շտեմարաններ և այլն օգտագործումը:

Այս մեթոդով ուսուցումը ենթադրում է ելակետային որևէ հարցադրման առավել գործնական լուծում: Սովորողներին առաջադրվում է հետազոտել վարկածներ, փաստարկներ՝ դասը մոդելավորելու կամ խնդրին լուծում տալու նպատակով:

Համացանցի միջոցով ստացված նյութը բազմակողմանի է ներկայացնում տեղեկատվությունը, բացահայտում է դրա կապը այլ բնագավառների հետ, ընդլայնում է որոնվող նյութի ներկայացման ձևերը՝ տեքստ, նկար, աղյուսակ, դիագրամ ,ձայն, տեսագրություն և այլն:



Վեբ-որոնման իրականացման քայլերը

▪ Ծրագրային նյութերից ընտրել ուսումնական այն հարցը, որը պահանջում է լուծում, բազմակողմանի վերլուծություն/ ուսումնասիրություն (հարցը լիովին կամ բազմակողմանիորեն արտահայտված չէ ծրագրում կամ դասագրքում):

▪ Գտնել խնդրի կարևորությունն ու կիրառական նշանակությունը:

▪ Որոնել մեր բնագավառին, առարկային վերաբերող համացանցային աղբյուրներն ու ռեսուրսները, որտեղ տեղեկատվություն է պարունակվում ընտրված հարցի, խնդրի վերաբերյալ:

▪ Գտնել տեղեկատվության այլ աղբյուրներ:

▪Սովորողների համար հստակ ձևակերպել հարցը, բացատրել խնդրի կարևորությունը, խնդրի կիրառման նշանակությունը:

▪Սովորողներին հանձնարարականներ տալ խնդրի լուծումը փնտրելու համար: Առաջադրել, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ որոնել և որտեղ (հղումներ, գրականության ցանկ):

▪ Հետևել տեղեկատվության վերամշակման, վերլուծման, եզրահանգման փուլերին:

▪Սովորողների հետ քննարկել արդյունքների ներկայացման ձևը: Քննարկել և մշակել հետազոտության գնահատման չափանիշները:

Ներկայացված աղյուսակում վեբ որոնման համար նախատեսված առաջադրանքները դասակարգված են ըստ բարդության:

	Առաջադրանք
1.	Թեմայի ուսումնասիրում՝ օգտագործելով առաջադրված հղումները:
2.	Տրված թեմային վերաբերող մուլտիմեդիա նյութի հավաքածուի ստեղծում: Հղումները տրվում են:
3.	Տրված թեմային վերաբերող փաստացի, կոնկրետ հարցերին պատասխանելու համար տեղեկատվության որոնում:
4.	Անհատական հանձնարարականներ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ:
5.	Պրոբլեմային հանձնարարականներ: Հիմնահարցի մոդելավորում կամ լուծում:

Հապավումների ուսուցման գործընթացում որպես թիրախային խումբ ընտրում ենք ուսանողներին, քանի որ մեր ընտրած ուսումնական նյութը բուհական դասընթացում ուսումնասիրվում է ոչ բազմակողմանիորեն. չեն ներկայացվում հապավումների ծագման պատմությունը, տարբեր բնագավառներում դրանց գործածությունները, համառոտագրությունների, հապավումների և պատճենումների առնչության եզրերը, նորագույն հապավումների ճանաչման և կիրառության ուղիները:

Հապավումները ճանաչելու, դրանց տեսակները տարբերակելու, բուն հայերեն և փոխառյալ հապավումների կիրառության ոլորտները սահմանելու նպատակով ուսանողներին հանձնարարում ենք մեր կողմից առանձնացրած կայքէջերում առկա նյութի ուսումնասիրություն, տեղեկատվության այլ աղբյուրների որոնում:

Համապատասխան կայքէջերի էլ. հասցեներ (link)

www.nayiri.com

www.armenianlanguage.am/am/Encyclopedia_aghayan_eduard

lraber.asj.oa.am.pdf

«Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք»
«ՀՀ օրենսդրությունը»
«ՀՀ լեզվի մասին օրենք» ...

Աշխատանքի առաջին փուլում → ուսանողին հանձնարարում ենք համառոտագրության և հապավման սահմանումները, հապավումների տեսակները, գրության կանոնները ներկայացնել առավել հարմար մեթոդով կամ մեթոդական եղանակով /տրամագրային բուրգ, Վեննի դիագրամ, երկթև աղյուսակ/:

Օրինակ՝ լեզվական իրողությունների ուսումնասիրության համար կիրառում ենք համադրության եղանակը:

Համառոտագրությունները	**Հապավումները**
1. Բառերի կրճատ գրության տեսակ:	**1.** Բառերի կրճատ գրության տեսակ:
2. Բաղադրիչների համառոտագրվող մասերը գրվում են առանձին-առանձին կրճատման նշան հանդիսացող կետով:	**2.** Բաղադրիչների համառոտագրվող մասերը գրվում են միասին՝ առանց կետերի:
3. Համառոտագրվող բառերը կարդացվում են ամբողջությամբ, առանց կրճատման:	**3.** Թե՛ գրավոր խոսքը կարդալիս, թե՛ բանավոր խոսքում արտասանվում են հապավված ձևով:
4. Համառոտագրվել կարող են ոչ միայն բառերը, այլև մեկ բառը:	**4.** Բաղկացած են լինում առնվազն երկու բաղադրիչ բառերից:
5. Համառոտագրությունը բառաստեղծման միջոց չէ:	**5.** Հապավումը բառաբարդման եղանակ է:

Նյութի հավաքածուի համալրման նպատակով կայքէջերից քաղված տեղեկույթի հիման վրա ուսանողները ներկայացնում են համառոտագրությունները՝ որպես հապավումներին նախորդած իրողություն:

1. Վիմագրության մեջ համառոտագրման հնարավորություններն անսահմանափակ էին:

2. Կցագրման-կապգրման համար հաստատված, պարտադիր ու որոշակի կանոններ չեն եղել. համառոտագրումը բխել է կոնկրետ նպատակահարմարությունից:

3. Մեկ կամ մի քանի տառերի համառոտագրման դեպքում, որոշ բացառությամբ, օգտագործվել են գծային, կետային և այլ պատվո նշաններ:

4. Գրեթե բոլոր կապգրերն իրենց գոյությունը պահպանել են մինչև XVIII դ. սկիզբը: Տպագրության լայն իրադարձությունների տարածումից հետո պատմական նշանակալից դեպքերի, հրահանգների, կարգադրությունների արձանագրումը քարերի վրա վերանում է, ուստի կապգրերի կիրառությունը շարունակվում է հիմնականում տապանագրերի վրա ընդհուպ մինչև մեր օրերը:

Կցագրման-կապգրման տարածված տեսակներն էին.

❖ **Եղբայրագիր համառոտագրություն** —երբ առաջին տառի աջ սյունագծին կցվում - հյուսվում է հաջորդ տառի ձախ սյունագիծը և, այսպիսով, սյունագծերից մեկը հավասարապես ծառայում է առաջին և երկրորդ տառերին:

❖ **Միատառ համառոտագրություն**— երբ մեկ տառի վբա կցվում է //են մեկ կամ ավելի այլ տառեր:

❖ **Խառը տարբերակ**—երբ տառերը միաժամանակ կցվում են հաջորդաբար (ա տարբերակ) և. իրար վրա (բ տարբերակ) կամ տառը կրկնվում է:

Համառոտագրության տարածված նշաններն էին.

- ***Պատիվ նշանով գրություն / պատվագրություն/***

Վիմագիր արձանագրություններում մեծ թիվ կազմող *հայոց, տէր , աստված, Հիսուս // Յիսուս, Քրիստոս, թվին , ամեն, վասն, պարոն* բառերը հաճախ համառոտագրվում էին պատիվ նշանով, որը դրվում էր տառի կամ տառերի վրա՝ բառի բաց թողնված հատվածի փոխարեն:

Ա՞ծ

Հ՞ս

Քՙս

պ՞ն...

- ***Սյուն նշանով գրություն***

Սյունը շեշտի նման նշան էր, որ դրվում էր բաց թողնված ***ա*** տառի փոխարեն՝

խ′ղ′ղ

ժ′մ′ն′կ

- ***Երկվորյակ նշանով գրություն***

Երկվորյակը այժմյան չակերտի նման նշան էր, որ դրվում էր բաց թողնված *ձայնավորի* փոխարեն՝

խ′′ն′′ռհ′′թիւվն: [17]

Աշխատանքի երկրորդ փուլում → սովորողներին առաջադրվում է խնդիրը, ապա տրվում են հանձնարարականներ լուծումը փնտրելու համար:

<u>Խնդիր</u>

- իրավաբանություն
- տնտեսագիտություն
- լրագրություն

բնագավառներին վերաբերող հապավումները ներկայացնենք համակարգչային ձևաչափով:

[17] lraber.asj-oa.am/1968/1/1978-4(61).pdf,, Ս. Սաղումյան, Համառոտագրությունը հայ վիմագրության մեջ, 61-76 էջեր:

1.



ՏԱՌԱՅԻՆ (ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ) ՀԱՊԱՎՈՒՄ

Իրար հետ բաղադրվող բառերի սկզբնատառերից կազմված հապավում, բազմազան բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների պայմանական գրային սեղմ ձև: Իր կազմում սովորաբար բառ-բաղադրիչների քանակին համապատասխան տառեր է ունենում: Լինում է երկտառ (*ՍԴ- Սահմանադրական դատարան, ՏՏ -տեղեկատվական տեխնոլոգիաներ*), եռատառ (*ՈՒԳԸ – ուսանողական գիտական ընկերություն, ԲՈՀ – Բարձրագույն որակավորման հանձնաժողով*), քառատառ (*ՊՓԲԸ – պետական փակ բաժնետիրական ընկերություն, ՓՀԳՀ – փախստականների հարցերով գերագույն հանձնակատար*), հնգատառ (*ՀԱՄԿԽ – համամիութեանական արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ, ԳԿՀԱՀ – Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ*): Տառային հապավումներն ունեն անվանողական արժեք և, իբրև կանոն, գրվում են մեծատառով: Այս կանոնից շեղվում են բառային արժեք ստացած հապավումները (*բուհ, աէկ, ջէկ, հէկ, քկագ*)[18]:

ՎԱՆԿԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄ

Իրար հետ բաղադրվող բառերի վանկերից կամ սկզբնամասերից կազմված հապավում, բազմազան բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների պայմանական գրային սեղմ ձև: Կազմվում է երկու,

[18] Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու, Ե., 2014, էջեր 33, 34:

երեք, չորս, հինգ բաղադրիչ ունեցող բառակապակցություններից և լինում երկբաղադրիչ (*բաժվար-բաժնի վարիչ, արհկոմ-արհեստակցական կոմիտե*), եռաբաղադրիչ (*շրջգինկոմ-շրջանային գինվորական կոմիսար, քաղգործկոմ-քաղաքային գործադիր կոմիտե*), քառաբաղադրիչ (*ժողկրթբաժվար-ժողովրդական կրթության բաժնի վարիչ, երքաղգործկոմ-Երևանի քաղաքային գործադիր կոմիտե*), հնգաբաղադրիչ (*քաղժողկրթբաժվար-քաղաքային ժողովրդական կրթության բաժնի վարիչ, երքաղգազգործկոմ-Երևան քաղաքի գավառային գործադիր կոմիտե*)[19]:

ԽԱՌԸ ՀԱՊԱՎՈՒՄ

Իրար հետ բաղադրվող բառերի և՛ սկզբնատառերից, և՛ վանկերից կամ ամբողջական արմատներից, նաև հենց բառերից կազմված հապավում, բազմազան բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների պայմանական գրային սեղմ ձև (ԵրՊԻ-Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, Քանաքեռհէկ – Քանաքեռի հիդրոէլեկտրակայան, ժողդատարան -ժողովրդական դատարան):[20]



Փոխառյալ հապավումներ են՝

ՆԱՏՕ (North Atlantic Treaty Organization) -Հյուսիսատլանտյան դաշինք

ՅՈՒՆԵՍԿՕ(United Nations Educational, Scientific and Cultural Organization)- Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն

ՅՈՒՆԻՍԵՖ(United Nations Children's Fund) Միավորված ազգերի

[19] Տե՛ս նույն տեղում:
[20] Տե՛ս նույն տեղում:

մանկական հիմնադրամ

ՖԻՖԱ (Federation Internationale de Football Association)- Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա

ՈՒԵՖԱ (Union of European Football Association)- Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիաների միություն

ՖԻԴԵ (Federation Internationale des Echecs)- Շախմատի միջազգային ֆեդերացիա

Առաջադրել, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ որոնել և որտեղ (հղումներ, գրականության ցանկ):

Որոնողական հանձնարարականներ

Օգտվելով նախարարությունների կայքէջերից, օրինագծերից, լրատվական աղբյուրներից, մասնագիտական գրականությունից, բառարաններից՝ առանձնացնել վերոնշյալ բնագավառների խառը բառացանկեր և դրանք դասդասել ըստ տեսակների, գրության եղանակների առանձնահատկությունների՝ կիրառելով խմբավորում մեթոդական հնարը: Աշխատանքը կարելի է ներկայացնել անհատական և խմբային եղանակով:

Իրավաբանական, տնտեսագիտական և լրագրողության տերմին-հապավումների ցանկ

1. ԱԱԳ --- ազատ առևտրի գոտի
2. ԱԱԾ --- ազգային անվտանգության ծառայություն
3. ԱԱՀ --- ավելացված արժեքի հարկ
4. ԱԱՊ--- առևտրաարդյունաբերական պալատ
5. ԱԽ --- անվտանգության խորհուրդ
6. ԱՄՖ --- Արհմիությունների միջազգային ֆեդերացիա
7. ԱՎԾ --- ազգային վիճակագրական ծառայություն
8. ԲԲԸ --- բաց բաժնետիրական ընկերություն
9. ԴՁ --- դուստր ձեռնարկություն

10. ԵՏՄ --- Եվրոպական տնտեսական միություն
11. ՁԼՄ --- զանգվածային լրատվական միջոց
12. ՁՏԲ --- զուտ տնտեսական բարեկեցություն
13. ԻՐՏԵԿ – իրավական տեղեկատվություն
14. ՀԱԱ--- համախառն ազգային արդյունք
15. ՀԲ ---Համաշխարհային բանկ/հայկական բանակ
16. ՀԲՄ ---Հայաստանի բանկերի միություն
17. ՀԳԸ ---հայ գործարարների ընկերություն
18. ՀԸ --- հեռուստաընկերություն
19. ՀԿ --- հասարակական կազմակերպություն
20. ՀՀ ՁՈՒ ---ՀՀ զինված ուժեր
21. ՀՀ ԻՄ --- ՀՀ իրավաբանների միություն
22. ՀՀ ՀԽ --- ՀՀ հանրային խորհուրդ
23. ՀՁ --- համատեղ ձեռնարկություն
24. ՀՍՄ ---Հայաստանի սպառողների միություն
25. ՀՔԾ --- հատուկ քննչական ծառայություն
26. ՄԱԳՀ --- մաքսադրույքների և առևտրի գլխավոր համաձայնագիր
27. ՄԻԵԴ --- Մարդու իրավունքների եվրոպական դատարան
28. ՄԻԵԿ --- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
29. ՄԻՀՀ --- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
30. ՄԻՊ --- մարդու իրավունքների պաշտպան
31. ՍՊԸ --- սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
32. ՍՄ --- Սպառողների միություն
33. ՍՆ ---սոցիալական ներդրում
34. ՏԱՄ ---Տնտեսական և արժութային միություն /Եվրոպա/
35. ՏԲՉ --- տնտեսական բարեկեցության չափանիշ
36. ՏԻՄ ---տեղական ինքնակառավարման մարմին
37. ՓԲԸ --- փակ բաժնետիրական ընկերություն
38. ՓԵՀ --- փողի եվրոպական համակարգ

39. ՓՄՀ --- փողի միջազգային հիմնապաշար
40. ՓՄՁ ---փոքր և միջին ձեռնարկություններ
41. ՔԱ ---քաղաքացիական ավիացիա
42. ՔԳՀ--- քաղաքական գործողությունների հանձնաժողովներ
43. ՔԿԱԳ --- քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին
44. ՔԿՀ --- քրեակատարողական հիմնարկ
45. ՔՕ --- քաղաքացիական օրենսգիրք // քրեական օրենսգիրք
46. ՔՊ ---քաղաքացիական պաշտպանություն
47. ՕՀՍ --- օգտակարության և հնարավորության սահման

Աշխատանքի երրորդ փուլում → սովորողներին առաջադրվում են *պրոբլեմային հանձնարարականներ:*

Հիմնահարցի մոդելավորում

Փոխառյալ վանկային և խառը հապավումների ուսումնասիրությունը կառուցում ենք կիսապատճենումների կաղապարների համեմատությամբ:

Ներկայացվում են փոխառյալ հապավումներ և կիսապատճենումներ եզրերի սահմանումները:

Փոխառյալ են այն հապավումները, որոնք հայերենը վերցրել է օտար լեզուներից՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն:

Պատճենումը փոխառության եղանակ է, երբ լեզվական միավորը՝ բառը, կայուն բառակապակցությունը, դարձվածաբանական միավորը, արտահայտությունը (երբեմն նախադասությունը) ստեղծվում է այլ լեզվի համապատասխան միավորի կազմության կամ իմաստային կաղապարով, նրա ընդօրինակմամբ: Կաղապարող տարրերը կարող են լինել թե՛ սեփական լեզվի բառակազմական միավորներից և թե՛ սեփական և փոխառյալ: Պատճենման տեսակ են *կիսապատճենումները* (մասնակի պատճենումներ), որոնց կաղապարատարրերն արտահայտվում են և՛ փոխառյալ, և՛ սեփական լեզվի բառակազմական միավորներով, ինչպես՝ автостоянка >

ավտո-կանգառ, электростанция > էլեկտրական, кинозвезда> կինոաստղ:

✓ Ըստ Է. Աղայանի՝ հապավումների մասին խոսելիս պետք է անդրադառնալ նաև հապավումների պատճենումներին, ըստ որում,պատճենում կարելի է համարել ոչ թե բուն հապավումները, այլ այնպիսի հապավումները, որոնք բաղադրյալ անունների զեղչումներով ընդօրինակում են այլ լեզուների հապավումները. հայերենը հետևում է օտար լեզվում հապավված բառի սկզբունքներին[21]:

Ուսանողներին հանձնարարում ենք, օգտվելով վերոնշյալ կայքէջերից, լրատվական աղբյուրներից, մասնագիտական գրականությունից, բառարաններից, առանձնացնել փոխառյալ հապավումների, կիսապատճենումների և կիսապատճենում – հապավումներ օրինակներ և դրանք դասդասել եռաթև աղյուսակում:

Աշխատանքը ներկայացվում է խմբային եղանակով:

Օրինակ՝ *տեխզննում, մուլտիերոս, էլեկտրական, քաղակտ, մարզկենտրոն, պետհամարանիշ, էլփոստ, մուլտծրագիր, զինգրքույկ, գիտխորհուրդ, ավտոկանգառ, էներգամատակարարում,տեխստուգում, գիտարշավ, ավիադպրոց, էլցանց, ճանշինտեղամաս, էլեկտրազոդել, ժողգործիքներ, ֆինբաժին, պատմատ, կենցաղսպասարկում, ընդկազմբաժվար, էլեկտրադիտակ, կինոաստղ* և այլն:

Հապավումներ	**Կիսապատճենումներ**	**Կիսապատճենում-հապավումներ**
կենցաղսպասարկում մարզկենտրոն	միկրոաշխարհ միկրոտնտեսագիտություն	տեխզննում մուլտծրագիր

[21] lraber.asj-oa.am/2401/1/1979-6(13).pdf,, Է. Աղայան , Ժամանակակից հայերենի հապավական բարդությունները, Հապավումներ, էջեր 26-27:

ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄՈՎ

‹‹ Ինչպիսին կլինի ձեր կենդանի խոսքը, այնպիսին կլինի ձեր կյանքը››:

Դարձվածքները ծագում են խոսքը պատկերավորելու ու արտահայտիչ դարձնելու պահանջից ու այդ նպատակով: Սրանք ոճականորեն երանգավորված լեզվական ակտիվ միավորներ են, որոնցով հասկացությունն արտահայտվում է որևէ վերաբերմունքի դրսևորմանբ: Ոճական-արտահայտչական կողմը դարձվածքների բովանդակության էական մասն է կազմում:

Դարձվածքները հատուկ են ժողովրդախոսակցական ոճին. դրանց մեջ արտացոլվում են ժողովրդի բարքերը, սովորույթներն ու ավանդույթները, կենսափորձն ու պատկերացումները, ինչպես նաև վերաբերմունքն օբյեկտիվ իրականության առարկաների, երևույթների, մարդկային հարաբերությունների նկատմամբ: հարստացնելով գրական լեզվի բառապաշարը՝ դարձվածքները խոսքը զերծ են պահելում միապաղաղությունից ու չորությունից. դրանց կիրառմամբ յուրացվում են ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ եղանակները: Փաստորեն, դարձվածքները կարևոր են ոչ միայն իբրև լեզվական շինանյութ, այլև որպես մտքի արտահայտման ազգային ձևեր:

Հայերենի դարձվածաբանությունը քննության են ենթարկել Ա. Մուրվալյանը, Վ.Քոսյանը,Ա. Սուքիասյանը, Պ.Բեդիրյանը, Ե. Գևորգյանը և այլք:

Վ.Քոսյանը նշում է, որ դարձվածաբանությունը սերտորեն առնչվում է բառագիտությանը, շարահյուսությանը, ոճաբանությանը, սակայն վերջիններիս ենթաբաժինը չէ: <<Նշանակությամբ, ծագմամբ և խոսքի մեջ ունեցած յուրահատուկ դերով պայմանավորված՝ դարձվածքները գտնվում են

բառագիտության, շարահյուսության և ոճաբանության հատման կետում>>[22], սակայն, ինպես պնդում է Վ. Քոսյանը, <<դարձվածաբանությունը բառագիտության մի բնագավառ է, ուստի և դարձվածքները պետք է ուսումնասիրվեն բառային կազմի մեջ՝ իբրև առանձին ենթաբաժին>>[23]:

Քոսյանը դարձվածք չի համարում առածները, ասացվածքները և թևավոր խոսքերը, քանի որ դրանք, ըստ նրա, շարահյուսորեն վերլուծելի կառույցներ են, և դրանց բաղադրիչները բառային տեսակետից ինքնուրույն են. <<Դարձվածք պետք է համարել փոխաբերական-այլաբանական միասնական իմաստ ունեցող ամեն մի կայուն բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություն>>[24]:

Հեղինակը դարձվածքներն իմաստային տեսակետից բաժանում է երկու խմբի՝

1. անվանողական արժեք ունեցող դարձվածքներ, որոնք արտահայտում են հասկացություն և հարաբերակից են բառերին կամ բառակապակցություններին,

2. հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքներ, որոնք հարաբերակից են նախադասություններին:

Այսօր բուհական դասընթացում ‹‹ Դարձվածք›› թեման ուսումնասիրվում է ‹‹Բառակազմություն›› բաժնում՝ կարևորելով դարձվածքներն՝ իբրև <<ձևիմաստային պարտադիր միավորներ>>[25]: Թեմայի ուսուցումն իր առանձնահատուկ տեղն ունի, քանի որ այն ոչ միայն հարստացնում է խոսողի բառապաշարը, զարգացնում լեզվամտածողությունը, այլև յուրահատուկ կապող օղակ է լեզվի բաժինների միջև. դարձվածքները կարելի է ուսումնասիրել բառային, ձևաբանական, շարահյուսական, ոճաբանական կտրվածքներով:

---

[22]Գ. Ջահուկյան, Է.Աղայան, Վ.Առաքելյան, Վ.Քոսյան, Հայոց լեզու, 1 մաս, Ա. պրակ, Ե., 1980, էջ 473:
[23]Նույն տեղում, էջ 474:
[24]Նույն տեղում, էջ 476:
[25] Ա.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982, էջ 369:

Ներկայացնում ենք դարձվածքների բուհական ուսուցման օրինակ նախագծային մեթոդով:

Նախագծային մեթոդը (Project methods) ուսուցման համակարգ է, որի ընթացքում սովորողները գիտելիքներ, կարողություններ, հմտություններ են ձեռք բերում աստիճանաբար բարդացող գործնական նախագծերի պլանավորման և իրագործման ընթացքում: Համաշխարհային մանկավարժության մեջ այս մեթոդը նոր երևույթ չէ. այն առաջին անգամ նկարագրվել է 20-րդ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում կրթական բարեփոխումների շրջանում: Նախագծային մեթոդի առանձնահատկությունն այն է, որ ուսուցումը կազմակերպվում է սովորողների նպատակային գործունեության միջոցով: Փորձն ապացուցում է, որ նախագիծ մշակող և իրագործող ուսանողները կարողանում են աշխատել խմբում, համագործակցել ընկերների հետ, կոնկրետ այս կամ այն խնդիրը լուծելու համար կիրառել տարբեր ոլորտներից ձեռք բերած իրենց գիտելիքները:

Ուսումնական նախագիծն ունի իր իրականացման փուլերը.

1. հիմնահարցի ձևակերպում

2. աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում

3. աշխատանքի բաժանում

4. խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք

5. հետազոտություն

6. ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ

7. կատարված աշխատանքների ներկայացում / նախօրոք որոշվում է ներկայացման ձևը՝ տեսանյութ, ֆոտոշարք, հոդված կամ բնագիր/

8. սովորողների աշխատանքների գնահատում /դասավանդողի և սովորողների կողմից/

9. հետագա աշխատանքի ուղիների նախանշում

Այստեղ նախագծի բուն նպատակներից մեկը սովորողի մեջ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելը և դրան գնահատական տալն է: Նախագծումը պետք է լինի նպատակաուղղված, զարգացնի սովորողի ճանաչողական ունակությունները, նպաստի արժեհամակարգի ձևավորմանը, առաջացնի սեր հայրենիքի, նրա մշակույթի, պատմության, հոգևոր արժեքների նկատմամբ:

Նախագծի իրականացման ժամանակ անպայման աշխատում ենք կիրառել սովորողների ձեռք բերած գիտելիքները:

Նախագծի իրականացում

Առաջին փուլում ձևակերպվում է հիմնահարցը.

դարձվածքային տարբերակների հետազոտությունը բազմիմաստ, համանուն, հոմանիշ դարձվածքների համեմատությամբ

Մինչև աշխատանքային խմբերի ձևավորումը ուսանողներին ենք տրամադրում (համակարգչային ձևաչափով) *տեսական նյութի նախնական հավաքածու:*

Դարձվածքների կարևոր հատկանիշները.	**Դարձվածքների ձևավորման ոճական հնարները**
✓ իմաստային ամբողջականությունը ✓ փոխաբերականությունը ✓ կայունությունը ✓ պատրաստի վերարտադրելիությունը ✓ պատկերավորությունը	• փոխաբերություն • չափազանցություն • շրջասություն • փոխանունություն • համեմատություն

Դարձվածքների իմաստի և բովանդակության համար հիմք հանդիսացող պայմանները	**Դարձվածքների հիմնական բաղադրիչներն ըստ իրենց ընդհանուր նշանակության**
• լեզուն կրող ժողովրդի հոգեբանությունը • պատմությունն ու ազգագրությունը • աշխարհագրական տարածքն ու բնակլիմայական պայմանները • տնտեսական կյանքն ու կենցաղը • հավատալիքները • մշակութային կյանքը	• գյուղատնտեսությանը վերաբերող բառեր • գույների անուններ • լուսատուների անուններ • զենքերի անուններ • կենդանիների անուններ • հանածոների անուններ • դպրությանը վերաբերող բառեր • հավատալիքներ ցույց տվող բառեր • մարմնի մասերի անուններ…..

Դարձվածքների առաջացման ուղիները

- **ժողովրդական բանահյուսությունից**

✓ հեքիաթ
✓ էպոս
✓ առած
✓ ասացվածք

- **ազգային ավանդույթներից**
- **հավատալիքներից**
- **հին հունական դիցաբանությունից**
- **Աստվածաշնչից**

✓ Հին Կտակարան
✓ Նոր Կտակարան

- **համաշխարհային գրականությունից**
- **ազգային գրականությունից**
- **պատմական իրադարձություններից**

Դարձվածքների արտահայտած նրբիմաստները

դրական վերաբերմունք արտահայտող (*աչքի լույս, Աստծու գառ)*

բացասական վերաբերմունք արտահայտող (*խելքի տոպրակ, կապը կտրած)*

ընդհանուր վերաբերմունք արտահայտող

(աչքը ճամփին, կանաչ – կարմիրը կապել)

հասկացություն արտահայտող դարձվածքներ

(կողը հաստ, գլուխ բերել)

նախադասություն դարձվածքներ

(ճիշտ խոսքը աչք կծակի, մի ձեռքը ծափ չի տա)

Երկրորդ փուլում ձևավորվում են աշխատանքային խմբեր (չորս խումբ):

Աշխատանքային չորս խմբերը ձևավորելիս մի խումբն առանձնացնում ենք՝ հաշվի առնելով խումբ կազմող ուսանողների՝ հետազոտական - որոնողական աշխատանք կատարելու կարողությունները:

Երրորդ փուլում կատարում ենք աշխատանքի բաժանում: Աշխատանքային խմբերին հանձնարարում ենք դարձվածքների ձևիմաստային խմբերի ուսումնասիրությունը կատարել ըստ տրված գծագրական դասակարգչի:

Ուսանողների առաջին խումբ

մենիմաստ դարձվածքներ

բազմիմաստ դարձվածքներ

Ուսանողների երկրորդ խումբ

հոմանիշ դարձվածքներ

հականիշ դարձվածքներ

Ուսանողների երրորդ խումբ

դարձվածային համանուններ

Ուսանողների չորրորդ խումբ
(հետազոտողների խումբ)

դարձվածային տարբերակներ

Ուսանողների առաջին խումբ

ՄԵՆԻՄԱՍՏ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ	ԲԱԶՄԻՄԱՍՏ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ
Մեկ իմաստ ունեցող, հասկացություն արտահայտող, իրենց իմաստներով բառի բառային իմաստներին նմանվող դարձվածային միավորներ:[26] Օրինակ՝ *արապի երգ* – վերջին ստեղծագործություն, *օձի կաթ* – չըճարվող, հազվագյուտ որևէ բան, *սրտի խորքում* – ներքուստ:	Մեկից ավելի իմաստներ ունեցող, հասկացություն արտահայտող, իրենց իմաստներով բառի բառային իմաստներին նըմանվող դարձվածային միավորներ[27]: Օրինակ՝ *աստծո կրակ* – 1. Փորձանք, աղետ, պատիժ, 2. չար, աշխույժ, *ձեռքերը լըվանալ* – 1. չխառնվել, 2. մի կողմ քաշվել, 3. պատասխանատվություն չկրել:

[26]Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու, Ե., 2014, էջ 44:

[27] Տե՛ս նույն տեղը, էջ 41:

Ուսանողների երկրորդ խումբ

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՀՈՄԱՆԻՇՆԵՐ	ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՀԱԿԱՆԻՇՆԵՐ
Իրենց հնչյունաբառային կազմով բացարձակապես տարբեր, սակայն նույն կամ մոտ իմաստներն ունեցող, միևնույն ժամանակ ոճական կիրառություններով ու հուզարտահայտչական գունավորումներով տարբերվող, որոշակի համատեքստում իրարով փոխարինվող դարձվածային միավորներ: Պատկանում են միևնույն բառաքերականական կարգին (նույն խոսքի մասին)[28]:Օրինակ՝ ականջի *ծայրով լսել* - ականջի *տակով անցնել,* բախտից *զանգատվել* - բախտն *անիծել,* նազ *անել* – նազ *ծախել:*	Իրար հակառակ, հակադիր բառային իմաստներ ունեցող դարձվածային միավորներ: Պատկանում են միևնույն բառաքերականական կարգին (նույն խոսքի մասին): Հիմնականում բայական, մասամբ նաև ածականական և մակբայական դարձվածային միավորներ են[29]: Օրինակ՝ յոթ սարից *այն կողմ* - քթի *տակ,* շունչը *կտրել* - շունչ *տալ,* առյուծի կաթ խմել – մկան ծակը մտնել:

Ուսանողների երրորդ խումբ

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ

Իրենց հնչյունաբառային կազմով բացարձակապես նույն, սակայն տարբեր իմաստներ ունեցող և ժամանակակից լեզվամտածողությամբ իբրև տարբեր միավորներ գիտակցվող դարձվածային միավորներ Դարձվածային համանունությունը ընդգրկում է հիմնականում բայական դարձվածքները: Խիստ սակավ են այլ խոսքի մասերին պատկանող համանուն դարձվածքները[30]: Օրինակ՝

[28] [28]Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., նշվ. աշխ., էջ 43:

[29] Տե՛ս նույն տեղը, էջ 42:

[30] Նույն տեղում, էջ 42:

մի բերան – մի փոքր, մի քիչ, մի պատառ (ուտել)

մի բերան -մեկ անգամ (ասել)

մի բերան -անվերջ, անդադար

մի բերան –միահամուռ, միաձայն

աչքերը փակել –խաբել, մոլորեցնել

աչքերը փակել – չնկատելու տալ

աչքերը փակել – քնել

աչքերը փակել – մեռնել

Չորրորդ խումբը հետազոտական - որոնողական աշխատանք կատարելու կարողություններ ունեցող ուսանողների խումբն է, որոնց տեսական նյութի հավաքածուին կից տալիս ենք դարձվածային տարբերակները ներկայացնող դասակարգիչ:



Ներկայացնենք չորրորդ խմբի ինքնուրույն հետազոտական աշխատանքի նախագիծը:

1. Ուսանողներին տրամադրում ենք հուշող բանալի բառակապակցություններ, որոնց միջոցով սահմանում են դարձվածային տարբերակները և հագեցումը օրինակներով.

հաստատուն կազմն ունեցող, դարձվածային միավորներ, բառ-բաղադրիչներ, իմաստային ձուլվածության աստիճան, բառաքերականական փոփոխակներ, փոխատեղական տարբերակներ, տարաբաղադրիչ տարբերակներ, ձևաբանական տարբերակներ, հավելադրական տարբերակներ:

Չորրորդ փուլում քննարկվում են ստացված արդյունքները, կատարվում են ուղղորդումներ՝ ճանաչելու, դասակարգելու, սահմանելու լեզվական երևույթները:

Հինգերորդ փուլը կատարված աշխատանքների ներկայացման փուլն է / տեսանյութ, հոդված կամ բնագիր/:

Դարձվածային տարբերակներ

Տարաբաղադրիչ տարբերակներ

1. Հարադրավոր բայերի

✓ **անուն հարադիրի հոմանիշ զույգերով կազմվող**

ճանապարհ բացել – *ճամփա* բացել - *ուղի* բացել

ճանապարհ անցնել – *ճամփա* անցնել - *ուղի* անցնել

իրար ուտել – *մեկմեկու* ուտել

✓ **անուն հարադիրի և նույնարմատ հարադրությամբ կամ կրկնավոր բարդությամբ կազմվող**

ճակատ տալ – *ճակատ ճակատի* տալ

համ առնել - *համ-հոտ* առնել

տուն դնել – *տուն ու տեղ* դնել

✓ **հոմանիշ բայ-հարադրյալով կազմվող**

դարն *անցնել* – դարն *ապրել*

դափնիների վրա *հանգստանալ* – դափնիների վրա *հանգչել*

հալած յուղի տեղ *ընդունել* – հալած յուղի տեղ *դնել*

✓ **համադրական բայ և հարադրավոր բայ հոմանիշ զույգերով կազմվող**

ճակատը *պարզել* - ճակատը *պարզ անել*

երեսին նայել – երեսին մտիկ անել – երեսին մտիկ տալ

աչքերից կայծեր *թռչել* – աչքերից կայծեր *դուրս թռչել*

քիթը *տնկել* – քիթը *վեր տնկել*

2. Բառապաշարի գրական և խոսակցական կամ բարբառային շերտի բառերով, արևելահայերենի և արևմտահայերենի բառերով կազմվող

այտը դեմ տալ – *թուշը* դեմ տալ

կաթը *շրթունքին* չորանալ – կաթը *պռոշին* չորանալ

ճակատը *համբուրել* – ճակատը *պաչել*

դատարկությունը լցնել – *պարապը* լցնել

նույն կաղապարից *ելած լինել* – մեկ կաղապարե *թափված ըլլալ*

սիրտը *կակղել* – սիրտը *կակուղանալ*

Ձևաբանական տարբերակներ

1. **Հարադրավոր բայի անուն հարադիրի քերականական փոփոխությամբ կազմվող**

✓ ***անհոդ և հոդով ձևերի հակադրությամբ***

կյանք տեսած – *կյանքը* տեսած

ձեռք գցել - *ձեռքը* գցել

ձեռք բռնել - *ձեռքը* բռնել

✓ ***եզակիի – հոգնակիի հակադրությամբ***

ականջը սրել - *ականջները* սրել

կոկորդիլոսի *արցունք* թափել - կոկորդիլոսի *արցունքներ* թափել

սանձը բաց թողնել – *սանձերը* բաց թողնել

✓ ***հոլովական տարբեր ձևերով***

ոտքը թեթև - *ոտքից* թեթև - *ոտքով* թեթև

արյունը *գլուխը* բորբոքվել - արյունը *գլխին* բորբոքվել - արյունը *գլխում* բորբոքվել

երեսին շպրտել – *երեսով* շպրտել

երկու *ոտքով կաղալ* – երկու *ոտքից կաղալ*

2. Հոմանիշ կապային կառույցներով կամ կապային կառույցով և համապատասխան հոլովաձևով կազմվող

ձկան *պես* – ձկան *նման*

փոշու *մեջ* մնալ – փոշու *տակ* մնալ

դարակների վրա մնալ – *դարակներում* մնալ

իր *ուսերի վրա* տանել – իր *ուսերին* տանել

3. **Բայածանցազուրկ և բայածանցավոր ձևերի կամ տարբեր բայաձևերի հակադրությամբ կազմվող**

դեմքը *թթվել* – դեմքը *թթվեցնել*

վզով/ս/ թոկ *գցես* – վզով թոկ *գցեն*

ունեմ – չունեմ – ունեցած – չունեցածս/ը/

Բառի անկումով կազմվող տարբերակներ

1. **Բայի անկումով**

աչքը դռանը *մնալ* - աչքը դռանը

ականջը ձայնի *պահել* – ականջը ձայնի

գլխիդ մատաղ *լինեմ* – գլխիդ մատաղ

2. **Գոյականի անկումով**

ձեռքը նեղ *տեղը* - ձեռքը նեղ

կյանքի ուղեգիր ստանալ – ուղեգիր ստանալ

սայլի հինգերորդ անիվ – հինգերորդ անիվ

Կապակցական տարբերակներ

կա – չկա - կա *թե* չկա

համ – հոտ առնել - *համ ու հոտ* առնել

հիսուն – հիսուն – հիսուն *առ* հիսուն

Փոխատեղական տարբերակներ

կախ գլուխ – գլուխը կախ

ոտքով թեթև - թեթև ոտքով

ճակատը պարզ – պարզ ճակատով

Վերջին փուլում սովորողների աշխատանքները գնահատվում են և՛ դասավանդողի, և՛ սովորողների կողմից:

Առաջադրանք

Բնագրային աշխատանք

Վերաշարադրե՛ք բնագրերը՝

ա/ ընտրելով պատասխաններից մեկը և պատճառաբանելով ընտրությունը,

բ/ հագեցնելով հոմանիշ, հականիշ, համանուն դարձվածքներով և դարձվածային տարբերակներով:

1. Մի մարդ, հայտնվելով բարձր լեռներում, դիմում է տեղաբնակին.

- Լսի՛ր, լեռնակա՛ն, այդ ինչպե՞ս ես դու այդքան հեշտ անցնում անդունդի վրա դրված ծառի վրայով այն դեպքում, երբ ես, հայտնվելով այդ ծառի վրա, վախից այլևս առաջ շարժվել չեմ կարողանում:

-Երբ ես այդ ծառի վրայով անցնում եմ մյուս կողմը, գնում եմ ջուր բերելու, որ իմ ընտանիքը ծարավից չմեռնի: Իսկ երբ հետ եմ վերադառնում, նույնիսկ մոռանում եմ անդունդի մասին:

– Եվ հիմա ես ինչպե՞ս հաղթահարեմ իմ վախը, ինչպե՞ս անցնեմ անդունդի վրայով և չվախենամ:

2. Մի մարդ փողոցում տեսնում է ցնցոտիավոր երեխայի, որ մուրացկանություն էր անում: Երեխան քաղցած էր և դողում էր ցրտից: Մարդը շատ է զայրանում ու դիմում է Աստծուն.

- Ինչու՞ ես դու անարդարություն թույլ տալիս, ինչու՞ ոչինչ չես ձեռնարկում:

Աստված ոչինչ չի պատասխանում: Բայց գիշերվա խավարում հանկարծ լսվում է Բարձրյալի ձայնը.

- Ես ինչ-որ բան ձեռնարկել եմ.

✓ ես ստեղծել եմ քեզ,

✓ ես յուրաքանչյուրին հնարավորություն եմ տվել,

✓ ես կյանք եմ պարգևել, մնացածը մարդկանց ձեռքերում է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
2. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962:
3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Ե., 1979:
4. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
5. Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978:
6. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1987:
7. Գյուրջինյան Դ., Բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Ե., 2006:
8. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Հայերենում գործածվող տառային հապավումների բառարան, Ե., 2007:
9. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Հայոց լեզու 10, Դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի համար (հումանիտար հոսք) Ե., 2010:
10. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., 1969:
11. Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու, Դասագիրք ավագ դպրոցի 10-րդ դասարանի հումանիտար հոսքի համար, Ե., 2009:
12. Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1963:
13. Թորգոմյան Ս., Բայի ուսուցումը հիմնական դպրոցում, Ե., 2010:
14. Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., Հայերենագիտական դպրոցական ընդարձակ բառարան-տեղեկատու, Ե., 2014:
15. Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., Տեսական և գործնական հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն),Ե., 2018:
16. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966:
17. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990:
18. Մուրվայան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Ե., 1959:

19.Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

20. Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Ե., 1980:

21.Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2008:

22. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն) , Ե., 1982:

23. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

24.Վարդանյան Գ., Հին ու նոր մեթոդները դասավանդման արդի փուլում, Ե., 2019:

25. Վարդումյան Ս., Վարելլա Գ. և այլք, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, Ե., 2005:

26. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ. մեթոդական ձեռնարկ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008:

27.lraber.asj-oa.am/2401/1/1979-6(13).pdf,, Է. Աղայան , Ժամանակակից հայերենի հապավական բարդությունները, Հապավումներ, էջեր 13-28:

28. lraber.asj-oa.am/1968/1/1978-4(61).pdf,, Ս. Սաղումյան, Համառոտագրությունը հայ վիմագրության մեջ, էջեր 61-78:

29. Виноградов В., Об основных типах фразеологических единиц в русском языке, Сборник статей и материалов АН СССР, М.-Л., 1947:

30. Седлина Л. М., Применение модулной технологии на уроках математики, С. Новодевичье, 2016.

31. Чернилевский Д. В., Дидактические технологии обучения в высшей школе; Учеб. пособие для студентов вузов, обучающихся по пед. специальностям, магистрантов, аспирантов и слушателей системы доп. проф. Образования, - М. : ЮНИТИ, 2002. - 436, [1] с.

32. http://ped-kopilka.ru/blogs/nadezhda-nikolaevna-dobreckaja/opisanie-aktivnogo-metoda-obuchenija-avtobusnaja-ostanovka.html